Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Հայոց պատմության ամբիոն

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԷԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ուսումնաօժանդակ ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ – 2008

Հրատարակության է երաշխավորել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհուրդը

Հեղինակները խորին երախտագիտություն են հայտնում «Տաթև գիտակրթական համալիրի» տնօրեն Սոկրատ Մկրտչյանին՝ ծեռնարկի տպագրության ծախսերը ամբողջությամբ հոգալու և ուսանողությանն անվճար տրամադրելու համար:

ՀՏԴ 941(479.25)(07)
ԳՄԴ 63.3(2Հ) g7
Կ 294

Կարապետյան Մհեր, Գևորգյան Էդիկ
Կ 294 XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ: Ուսումնաօժանդակ ծեռնարկ.- Եր.: Զանգակ-97, 2008, 68 էջ:

ԳՄԴ 63.3(2Հ) g7

ISBN 978-99941-1-421-4

© Հեղինակներ, 2008 թ.

Նվիրվում է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 85-ամյակին:

Ազատագրական պայքարը դարեր ի վեր եղել է հայ ժողովրդի մշտական ուղեկիցը: Ընկնելով օտարի տիրապետության տակ՝ նա ոչ մի ժամանակ անմռունչ չկրեց բռնակալության լուծը և մղձավանջային շատ պատմաշրջաններում դրսևորեց ազգային ինքնությունը պահպանելու անհավատալի եռանդ ու ազատագրվելու բուռն տենչանք: XIX դարի առաջին երեսնամյակին Արևելյան Հայաստանն ազատագրվեց պարսկական անագորույն լծից և անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ՝ իր համար ապահովեց գոյատևելու տանելի պայմաններ:

Մինչդեռ արևմտահայությունը մնաց թուրքական բիրտ տիրապետության տակ և ազատագրական ուղիների որոնումները շարունակեց նաև XIX դարի երկրորդ կեսին, երբ ծայր առան ապստամբական նոր շարժումներ, կաղապարվեց ազատագրական շարժման գաղափարախոսությունը, ծնունդ առան ժողովրդական ազատագրական պայքարի մարտակոչող գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ, ապա՝ ազգային կուսակցություններ՝ ազատագրական պայքարի իրենց քաղաքական ծրագրերով, ռազմավարության ու մարտավարության կոնկրետ դրսևորումներով:

Այդ այն ժամանակներն էին, երբ Ռաֆֆու պատկերավոր արտահայտությամբ 1885 թվականին հանդես եկան առաջին հայ ֆիդայիները, և զինավառ հայդուկը կանգնեց հայոց լեռների ծերպերին՝ որպես բռնակալական լծի տակ ճնշված ու հարստահարված, մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի բողոք, որպես ստրուկի ըմբոստացում իշխող բարբարոսության

դեմ: Իսկ հորիզոնում արդեն վառվում էին Աղբյուր Սերոբի, Գևորգ Չաուշի և Անդրանիկի շանթող կերպարները[1]:

Հայ ազգային-ազատագրական շարժումն ստացավ համազգային ձև ու բովանդակություն:

* * *

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումը ծագման իսկ պահից իր վրա է բևեռել ժամանակի հասարակական-քաղաքական մտքի սևեռուն ուշադրությունը: Գրվել են շարժման այս կամ այն խնդրին վերաբերող բազմաթիվ աշխատություններ, ստեղծվել է բազմաքանակ հուշագրական, վավերագրական գրականություն, շարժմանն արձագանքել է ժամանակի մամուլը: Փորձեր են արվել տալու շարժման գնահատականը, ուրվագծելու նրա հեռանկարներն ու արդյունքները, նշելու նրա զարգացման առավել արդյունավետ ուղիներն ու միջոցները: Այդ գնահատականները, կարծիքներն ու տեսակետները հաճախ հակասական էին, հակոտնյա ու իրարամերժ, որը պայմանավորված էր դրանց հեղինակների՝ հասարակական մտքի տարբեր ուղղությունների պատկանելու հանգամանքով:

* * *

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման ավետաբերը Զեյթունն էր՝ 1862-ի հերոսապատումով, որը լայն արձագանք գտավ ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Զեյթունի այդ նշանավոր ապստամբության գիտական ուսումնասիրության տեսակետից մեծ արժեք է ներկայացնում ապստամբության անմիջական մասնակից Մնացական Սեմերջյանի /Զեյթունցի/ «Զեյթունի անցյալեն և ներկայեն» աշխատությունը[2]: Համերաշխելով ակադեմիկոս Մ.Գ.Ներսիսյանին, որ Զեյթունցու աշխատության մեջ զգալի է պարզունակությունը և առկա՝ նեղ ազգայնական մտածելակերպը, չենք կարող չնշել գրքի գիտական-ճանաչողական անուրանալի արժանիքները:

Համառոտակի շարադրելով սուլթանական բռնապետության դեմ շուրջ կես հազարամյակում զեյթունցիների մղած կռիվների ու ընդհարումների պատմությունը /ըստ հեղինակի հաշվումների՝ 41 պատերազմ և 16 մանր դեպք/, Մ.Սեմերջյանը հանգամանորեն կանգ է առնում 1862-ի հերոսամարտի վրա, բացահայտում ապստամբության պատճառները, առիթը, տալիս ռազմական գործողությունների մանրամասն նկարագիրը: Նա զայրույթով է խոսում հայազգի Լևոն Լուսինյանի արկածախնդիր գործունեության մասին, վեր հանում դրա կործանարար հետևանքները, չարիքի աղբյուր համարելով ինքնակոչ «իշխանի» կազմած հանրագիրը՝ հասցեագրված ֆրանսիական կայսր Նապոլեոն III-ին: Այդ փաստաթղթում պարծենկոտ հայտարարություն էր արվում, թե իբր Կիլիկիայի հայությունն ի վիճակի է ըստ հարկի 70 000-անոց բանակ կազմել:

Մ.Սեմերջյանը բացահայտում է, որ թուրքական կառավարությունը Ֆրանսիայի միջնորդության առթիվ խնդրած վեցամսյա պայմանաժամանակն օգտագործեց ոչ թե հանրագրի պահանջների բավարարման , այլ փոքրաթիվ ու անհանդարտ տարրը մեջտեղից վերացնելու ուղիների որոնման վրա, նախապես ստուգելով ու հավաստիանալով, իհարկե, որ 1000 տուն ունեցող Զեյթունը, 3000 տուն ունեցող Մարաշը և 500 տուն ունեցող Հաճընը ի վիճակի չէին նշված թվով զինված ուժ դուրս բերելու:

Պատմաբանի հեռատեսությամբ Զեյթունցին սահմանագիծ է դնում ապստամբության պատճառների և առիթի միջև: Նա հեռու է Քեթմանցի երկու թուրքերի՝ Իբրահիմի և Իպիշի ընդհարումը, Արեգինի քեհյա Հակոբի միջամտելն ու սպանվելը և այդ առթիվ հայերի վրեժխնդրությունը ապստամբության պատճառ համարելուց, իրավամբ գտնելով, որ դա սոսկ «պատվական առիթ» էր Ազիզ փաշայի համար՝ իր հեռուն գնացող ծրագրի իրագործման ճանապարհին:

Եվ ահա Ազիզ փաշան 1862-ի հունիսի վերջին 12 000 խաժամուժով շարժվում է Զեյթունի վրա և բանակում Ջահան գետի ափին: Աշխատության մեջ տրվում է հակառակորդ ուժերի դասա-

[1] Ռ.Փ.Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 253:

[2] Զեյթունցի, Զեյթունի անցեալէն եւ ներկաէն, Կ.Պոլիս, 1911: Գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1900-ին:

վորությունը, նրանց հարաբերակցությունը, գրված դիրքերի նկարագիրը: Ռազմական գործողությունների խորքապատկերի վրա հեղինակը բացահայտում է զեյթունցիների անձնազոհությունն ու խիզախությունը, չմոռանալով հիշատակել նաև նրանց թույլ տված տակտիկական սխալները: Այսպես. նա ճիշտ չի համարում ապստամբության առաջնորդներից Աստվածատուր Ենիտյունյան /Նորաշխարհյան/ և Ղազար /Հազոր/ Շովրոյան իշխանների՝ 500 կռվողներով Ազիզ փաշային ընդառաջ գնալը և բաց դաշտում ճակատամարտ տալը, սխալ, որի հետևանքով հայերը տվեցին մարդկային զգալի կորուստներ, իսկ թուրքերը առաջխաղացման հնարավորություն ստացան:

Մ.Սեմերջյանը ռեալ է գնահատում նաև ապստամբության արդյունքները, գտնելով, որ կառավարության կողմից ստեղծված քննիչ հանձնաժողովը գործնական քայլերի չդիմեց՝ տևական խաղաղություն հաստատելու համար, ուստի Բ.Դռան, զեյթունցիների և շրջակա ցեղերի հարաբերությունները մնացին առաջվա պես լարված: «Անոնք մեզի դարանամուտ կըլլային, մենք ալ՝ անոնց, որ ատեն որ պատեհութիւն գտնեին»,- եզրափակում է հեղինակը[1]:

Այնքանով, որքանով նախախորհրդային շրջանում 1862-ի Զեյթունի ապստամբության վերաբերյալ մեկ այլ ծավալուն ուսումնասիրություն չի ստեղծվել, Մ.Սեմերջյանի գրքի համապատասխան մասն ստանում է սկզբնաղբյուրի նշանակություն: Դրա վկայությունն է թեկուզ հենց այն, որ Զեյթունի պատմությամբ զբաղվող հետագայի և ոչ մի ուսումնասիրող չի շրջանցել Մ.Սեմերջյանին:

Քննարկվող աշխատության երկրորդ մասը նվիրված է Զեյթունի մեկ այլ, իր մասշտաբներով թերևս ավելի խոշոր՝ 1895-ի ապստամբությանը: Այսօր՝ երբ արդեն հայ պատմագրությունը հետևողական քայլեր է ձեռնարկում մեր պատմության 90-ական թվականներին վերաբերող էջերը վերականգնելու ուղղությամբ, Մ.Սեմերջյանի աշխատության երկրորդ մասը դառնում է փաստական նյութի մատակարարման անգնահատելի աղբյուր:

1862-ի ապստամբությունից հետո շատ բան էր փոխվել: Հայ ժողովուրդը Բեռլինի կոնգրեսից /1878 թ./ և «Հայկական հարցի» միջազգային դիվանագիտության մեջ ձևակերպվելուց հետո ոտք էր դրել իր պատմության թերևս ամենածանր՝ ծրագրավորված կոտորածների ժամանակաշրջանը: Սասունի վայրագ կոտորածները սկիզբն էին միայն մեծ սպանդի: Հերթի էին դրվել Թուրքիայի հայաբնակ մյուս շրջանները: Գլխավորը՝ կոտորածի հրեշավոր ծրագիրը, արդեն ընդունված էր, առիթ գտնելը դժվար չէր: Մեջբերելով թուրք պաշտոնյաների սանձարձակությունների ու շահատակությունների առթիվ տված ղադի-կայմակամի պատասխանը՝ Զեյթունցին պարզաբանում է դրանց նպատակը. «Ես հրահանգ ունիմ իմ սիրելի թագավորեն այդպես վարվելու, որպեսզի դուք ալ գրգռվիք, մի խլրտում հանեք, այ ատեն թագավորը բարկանա և ձեզ ալ սասնո տառոսին հասցնե»[2]:

Ազատաբաղձ, պատվախնդիր զեյթունցին չէր կարող երկարորեն լռել թուրք պաշտոնյաների մեթոդիկ ստորացումների հանդեպ. պոռթկումը հասունանում էր: Այս լարված պահին էր, ահա, որ 1895 թ. հուլիսի վերջերին Արեգին գյուղում երևացին հնչակյան գործիչները՝ Աղասու առաջնորդությամբ:

Պատմագրության մեջ միտք է հայտնվել, թե իբր հիշյալ ապստամբության դրդիչները հնչակյան գործիչներն էին, չգային նրանք, զեյթունցիք չէին ապստամբի: Նրանք են, որ հրահրել, այնուհետև կազմակերպել ու մինչև վերջ ղեկավարել են ապստամբությունը:

Մ.Սեմերջյանի աշխատության ուշադիր ընթերցումն այլ բան է ցույց տալիս: Ճիշտ է, զեյթունցիք կտրականապես մերժում են կառավարության պահանջը՝ հնչակյաններին հանձնելու մասին, հաշտության բանակցությունների ժամանակ էլ նրանց անվտանգությունն ապահովող կետեր մտցնել տալիս պայմանագրում: Բայց որ ապստամբության բուն ղեկավարները շատ հարցերում ոչ միայն համաձայն չէին հնչակյաններին, այլև դեմ էին նրանց գործելակերպին, հաստատվում է Գարանլըգ-դերեի /Մութ ձոր/ խորհրդակցության փաստով:

Ապստամբության ղեկավարներից մեկի՝ 1862-ի հերոս Ղազար Շովրոյանի հանձնարարականով Մութ ձոր է գալիս Ֆրնուզի վանքի վանահայր Բարդուղիմեոս վարդապետը՝ հնչակյանների հետ բանակցելու, ինչպես նաև կացությունը կշռադատելու

[1] Նշվ. աշխ., էջ 99:

[2] Նշվ. աշխ., էջ 130:

և գործելու եղանակը վճռելու նպատակով: Բարդուղիմեոս վարդապետը, որը խորհրդակցության նախագահն էր, մանրամասնորեն հարցաքննում է Աղասուն՝ ցանկանալով պարզել նրանց ով լինելը: Խորհրդակցությունում, կոչ անելով անհապաղ զենքի դիմել, հնչակյաններն իբրև հաջողության գրավական մատնանշում էին Ալեքսանդրետի մոտ խարիսխ ձգած անգլիական ռազմանավերը, որոնք իբր այդտեղ էին եկել հայերին օգնելու նպատակով: Առարկելով նրանց՝ խորհրդակցության մասնակից զեյթունցի Հարություն Գոճայանն ասում է. «Եվրոպացիներու դրամին և անոնց օգնության վստահիլ՝ ըստ իս ծախորդ ձեռնարկություն մ՝է... այս սովորական երևույթին ուռուցիկ մեկնություն տալ և ուղղակի հայոց համար եկած են ըսել, ըստ իս ոչ միայն տղայական, այլև հիմարական է: Ազգային շարժման միայն ազգը պարտավոր է օգնել, որովհետև անոր օգուտը միայն իրեն կպատկանի»[1]: Այնուհետև Հ.Գոճայանն ասում է, որ անգլիական կառավարությունը, շահերով կապված լինելով Թուրքիայի հետ, երբեք էլ հակաթուրքական շարժմանն օգնություն ցույց չի տա, ինչպես որ ապստամբող ազգերին դրամ չեն տա նաև եվրոպական մյուս պետությունները:

Ղազար Շովրոյանը կոչ է անում կռվի ելնել՝ ապավինելով ոչ թե եվրոպացիներին, այլ նախախնամությանը: «Երբ որ մենք և մեր պապերը կպատերազմեինք , միթե մեր օգնությունը Լոնդոնեն կուգար, կամ թե օտարականաց խումբեր կուգային, կօգնեին , ոչ, ոչ, ոչ, այնպես չէ»,[2]- ասում է նա: Այս էր, ահա, զեյթունցիների վերաբերմունքը հնչակյանների նկատմամբ: Մեծ ակնկալություններ չունենալով հնչակյաններից արդեն Զեյթունում գումարված ժողովում, այնուամենայնիվ, որոշվում է ապստամբության ղեկավարմանը մասնակից դարձնել նաև նրանց: Որոշվում է ապստամբության դրոշ պարզել:

Հակառակ հնչակյանների հավաստիացումներին, թե վախենալով եվրոպական պետությունների միջամտությունից, սուլթանը չի համարձակվի զորք շարժել Զեյթունի վրա, հաջորդ օրն իսկ երևացին թուրք ասկյարները: Մ.Սեմերջյանը մեղադրում է հնչակյաններին անհեռատեսության մեջ: «Թշնամի բանակի

[1] Նշվ. աշխ., էջ 143:
[2] Նշվ. աշխ., 154:

ներկայությունը և առաջխաղացությունը անշուշտ հետևանք ունենալով մեր պ.Աղասիի գոռոզությանց և Մոսկովական[3] առաջարկին, այն է՝ 12 օր պայմանաժամին, որ ուրիշ բան չէր, եթե ոչ թուրքի հացին եղ քսել և ածանը սուղի նստեցնել»,[4] - գրում է նա:

Ապստամբությունը փաստորեն ավարտվեց Զեյթունցիների հաղթանակով: Եվրոպական պետությունների հյուպատոսների միջնորդությամբ թուրքական կառավարության հետ կնքվեց մի պայմանագիր, որով երաշխավորվում էր հնչակյան գործիչների՝ օսմանյան պետության ծախսով ապահով Եվրոպա մեկնելը, թուրքերը կատարյալ և ամբողջական ներում էին խոստանում զեյթունցիներին և պարտավորվում Զեյթունում նշանակել քրիստոնյա կառավարիչ, լեռնագավառը հինգ տարով ազատել հարկերից, զինաթափել շրջակա մահմեդական ցեղերին և զորքը հանել Ուլնիայից: Հատկանշական է, որ երբ պայմանագիրը կնքելիս հյուպատոսները Բարդուղիմեոս վարդապետին հարցնում են, թե ինչու նրանք լսեցին հնչակյաններին և ապստամբեցին, հայր սուրբը պատասխանում է. «Ոչ, այս հյուրերը հանցանք չունեն, այլ մեր Զեյթունի ժողովուրդը նպատակ ուներ ապստամբության դրոշակ բարձրացնելու, ես ալ ապստամբապետ, զգված էինք Համիդյան ռեժիմին անարդար վարմունքեն»[5]: Զեյթունցու աշխատությունը գրական մշակման ու խմբագրման է ենթարկվել բազմավաստակ լեզվաբան Հ.Աճառյանի կողմից, որտեղ մտել են նաև գիտնականի դիտողությունները:

Ժամանակի թարմ տպավորություններով է գրված Արշակ Միհրդատյանի «Պատմութիւն Զեյթունի եւ վերջին պատերազմին, որ տեղի ունեցավ 1895-ին» աշխատությունը[6], աշխատություն, որը դուրս է մնացել նախախորհրդային պատմաբանների ուշադրությունից:

[3] Մոսկոֆ թեքլիֆի – մեծաբանություն:
[4] Նշվ. աշխ.. մեջ, էջ 168: Կայմակամի պատվիրակի այն հարցին, թե ինչ է իրենց ուզածը, Աղասին պատասխանել էր, որ դա 61-րդ հոդվածի իրագործումն է 12 օրվա ընթացքում, հակառակ պարագային սպառնացել էր մեծ տերությունների միջամտությամբ:
[5] Նշվ. աշխ., էջ 211:
[6] Ա.Միհրդատեան, Պատմութիւն Զեյթունի եւ վերջին պատերազմին, որ տեղի ունեցավ 1895-ին, Կ.Պոլիս, 1909:

Շատ հարցերում Ա.Միհրդատյանը համաձայնում է Մ.Սեմերջյանին, օգտագործում նրա աշխատության համապատասխան էջերը: Կան, իհարկե, նաև տարակարծություններ: Ա.Միհրդատյանը ձգտում ունի եղածից բարձր նշանակություն տալ ապստամբությանը հնչակյանների մասնակցությանը և նրանց խաղացած դերին: Այսպես. ապստամբության պատճառներին նվիրված գլխում նա գրում է, որ հնչակյանները նախօրոք Եվրոպայից հեռագիր են ուղարկել Զեյթուն, հարցրել նրանց ապստամբելու պատրաստակամության մասին, ստացել են դրական պատասխան և նոր միայն մտել Զեյթուն: Սկզբնաղբյուրները նման փաստ չեն հավաստում: Ա.Միհրդատյանը ևս հաստատում է Մ. Սեմերջյանին, որ իրոք զեյթունցիք հակադրվել են հնչակյանների կազմած ծրագրին: Երբ ապստամբության առաջնորդներից մեկը՝ Հաջի աղա Մերկենյանը հնչակյանների ուշադրությունը հրավիրում է զեյթունցիների սակավազորության վրա, վերջիններս պատասխանում են, որ ծրագրվում է Զեյթունի, Մարաշի, Ադանայի, Հաճընի, Այնթափի, Ուրֆայի և Կյուրինի համաժամանակյա ապստամբություն: Սակայն Մերկենյանը նախազգուշացնում է, որ հիշատակված քաղաքներից և ոչ մեկը հնարավորություն չունի ապստամբելու, հետևաբար Զեյթունը ծանր դրության մեջ կընկնի: Ա.Միհրդատյանի աշխատության մեջ ևս արտահայտվում է այն միտքը, թե ապստամբության հրահրողները հնչակյանները չեն եղել: Ըստ նրա վկայության՝ պատերազմական գործողությունները սկսվելուց մի քանի օր անց հայերը ժողով են գումարում և ասում Աղասուն և Հրաչյային. «Դուք մի գիտնաք, որ Ձեր խոսքերուն հավատացինք ու պատերազմի ելանք, արդեն մենք մի քանի տարի էր, որ կուզեինք պատերազմել, ինչու որ կառավարության բռնած ընթացքը մեզ զզվեցուցած էր, և Սասունի կոտորածը որ լսեցինք՝ ավելի մեր սիրտերը բորբոքեցավ պատերազմելու և Սասունի վրեժը առնելու համար»[1]:

Զեյթունի ապստամբությունների վետերան, իշխան Ղազար Շովրոյանի, ինչպես նաև մյուս իշխանական տների՝ ապստամբությանը մասնակցելու հարցում հիշատակված երկու աշխատություններում կա հակասություն: Եթե Մ.Սեմերջյանը Ղ.Շովրոյանին և մյուս իշխաններին ներկայացնում է իբրև ապստամբության ակտիվ կազմակերպիչներ և ոգեշնչողներ, ապա Ա.Միհրդատյանը ձգտում է նսեմացնել նրանց դերը Ղ.Շովրոյանին ներկայացնելով ապստամբությանը հակառակորդ խմբավորման պարագլուխ: Ըստ Ա.Միհրդատյանի՝ այդ Ղ.Շովրոյանի նախաձեռնությամբ էր, որ մարդիկ ուղարկվեցին Մութ ձոր՝ ապստամբներին իրենց որոշումից ետ կանգնեցնելու հանձնարարությամբ: Վերոհիշյալ երկու աշխատությունների, ինչպես նաև օժանդակ մի շարք այլ նյութերի բաղդատումը մեզ բերում է այն հետևության, որ այդ հարցում Ա.Միհրդատյանի փաստարկումները հավաստի չեն:

Ա.Միհրդատյանի աշխատությունը, շատ բանով զիջելով Մ.-Սեմերջյանի գրքին, այնուամենայնիվ, մնում է իբրև 1895-ի Զեյթունի ապստամբության պատմության ուսումնասիրման համար կարևոր աղբյուր:

Զեյթունի ազատագրական պայքարի ուսումնասիրության համար կարևոր է Մամիկոն Վարժապետյանի «Հուշիկք Զեյթունի» աշխատությունը[2]: Այս աշխատությունը ևս չի արժանացել Զեյթունի պատմությամբ զբաղվող պատմաբանների պատշաճ ուշադրությանը, մինչդեռ այն պարունակում է փաստական մեծաքանակ նյութ: Աշխատության մեկենասն է Զեյթունի 1895-ի ապստամբության ակտիվ ղեկավարներից մեկը՝ Կարապետ Տեր-Հակոբյանը, որն իր իմացածը հուշագրողի գրչով մատակարարել է հեղինակին:

Սխալմամբ «Հուշիկք Զեյթունի» աշխատության հեղինակը ժամանակին համարվել է հենց ինքը՝ Կ.Տեր-Հակոբյանը, իսկ Մ. Վարժապետյանը դիտվել է սոսկ առաջինի հուշերի գրի առնող: Այս նույն թյուրիմացությունը մեխանիկորեն կրկնել է նաև Տեովլեթ Գևորգյանի աշխատության[3] գրախոսը՝ Հովի. Պողոսյանը: Մինչդեռ աշխատության ուշադիր ընթերցումը բացահայտում է իսկությունը. աշխատության հեղինակը Մամիկոն Վարժապետյանն է, որին և իր հիշողություններն ու նյութական օժանդակությունն է տրամադրել ապստամբության մասնակից Կ.Տեր-Հակոբ-

[1] Նշվ. աշխ., էջ 15:

[2] Մ.Վարժապետյան, Հուշիկք Զեյթունի, Մարզվան, 1912:

[3] Տ.Գևորգյան, Պատմություն Զեյթունի 1895-ի պատերազմներուն, Փարիզ, 1945-1949 թթ., հ. 1-3:

յանը: Բարեբախտաբար, աշխատության սկզբում, հեղինակի առաջաբանից առաջ, զետեղված է նաև գրքի մեկենասի «Առաջաբան»-ը, որոնց բաղդատումը հաստատում է վերևում ասվածը:

Կ.Տեր-Հակոբյանը աշխատում է ապացուցել, թե իբր Մ.Սեմերջյանի աշխատությունը զուրկ է արժանահավատությունից, որովհետև հեղինակը մասնակից չի եղել վերջին ապստամբությանը, թե նա ակամա և կամայական սխալներով ծգտել է նսեմացնել վերջին դեպքերի վսեմությունը, թե նրա աշխատությունը «չամիչ է, որի մեջ շատ են անհամ կորիզները»: Մեր կարծիքով, Սեմերջյանի աշխատությունը նման բացասական գնահատականի արժանացնելու հիմքը վերջինիս հնչակյան գործիչներով չոգևորվելն է, որոնցով այնքան հափշտակված է Կ.Տեր-Հակոբյանը և որոնց հետ էլ ապստամբությունից հետո նա հեռացավ Զեյթունից: Մենք այդ համոզմանն ենք գալիս, որովհետև Մ.Սեմերջյանը եթե որևէ բան նսեմացրել է վերջին ապստամբության դրվագներից, դա հնչակյանների մասնակցությունն է: Իսկ որ Սեմերջյանի աշխատությունն արժանահավատ է, աներկբայելիորեն ապացուցված է Տեովլեթի վերը հիշատակված աշխատությունում, որտեղ նա գրում է, թե Սեմերջյանն իր աշխատությունը շարադրել է բնիկ զեյթունցու իր գիտելիքների, ապստամբության կարկառուն գործիչ Բարդուղիմեոս վարդապետի անմիջական տպավորությունների, ինչպես նաև ապստամբության բազմաթիվ այլ մասնակիցների հավաստի հաղորդումների հիման վրա[1]:

Հակառակ Կ.Տեր-Հակոբյանի՝ Սեմերջյանի աշխատությանը տված աննպաստ գնահատականին, Մ.Վարժապետյանը, քաջ գիտակցելով Մ.Սեմերջյանի աշխատության ողջ արժեքը, առաջաբանում խոստովանում է, որ շարադրանքի ժամանակ մեծապես օգտվել է նրանից. «Տիար Մնացական Սեմերջյանի երկասիրությունները, որքան ալ անհամ կուտեր պարունակեն, Զեյթունի մասնավորապես հին կռիվները, դեպքերն ու դեմքերը իրենց թվականներով, տեղագրականն ու դրվագները ներկայացնելու մասին, մեր գլխավոր աղբյուրներն են եղած, որով արդարությունը պարտք կդնե մեր վրա՝ ջերմապես շնորհակալ ըլլալ իրեն»: Եվ իրոք, 1862-ի ապստամբության և հարակից հարցերի

[1] Նշվ. աշխ., էջ 119, հ. 2:

մասին գրելիս Մ.Վարժապետյանը նկատի է ունեցել բացառապես Զեյթունցու աշխատությունը: Մ.Վարժապետյանը ենթադրություն է անում այն մասին, որ Մ.Պեշիկթաշլյանի հանրահռչակ «Դուն զով խնդրես, մայր իմ անուշ» բանաստեղծության հրևան գալը կապված է ոչ թե Մելքիսեդեկ Քասմյանի, այլ Խասյան ազգանունով մեկ այլ զեյթունցու անվան հետ[2]: Ի դեպ, այդ գողտրիկ բանաստեղծության ստեղծման պատմության վերաբերյալ հետաքրքիր դիտողություններ է պարունակում նաև Տեովլեթի աշխատությունը: Քննելով անվանի պատմաբան Ալ. Երիցյանի այրու՝ Սրբուհի Երիցյանի հուշերը, ըստ որի Պեշիկթաշլյանի համար ոգևորության աղբյուր է ծառայել տեր Մովսեսի պատմածը, Տեովլեթն իրավացիորեն նշում է, որ Պեշիկթաշլյանն այդ մասին առաջին անգամ լսել է Մ.Սեմերջյանի հետ Պոլիս մեկնած տեր Հակոբից, համաձայնելով, իհարկե, Մ.Վարժապետյանի այն դիտողությանը, որ դեպքը կատարվել է ոչ թե Մելքիսեդեկ Քասմյանի, այլ Խասյանի հետ:

Մ.Վարժապետյանի աշխատության մեջ հետաքրքրական ու արժեքավոր տեղեկություններ կան կայմակամ Տավուտ Նիազի էֆենդու շահատակությունների հետևանքով զեյթունցիների 1875 թ. նոր ընդվզման մասին: Կայմակամը գողության մեջ կասկածում է իր մոտ ծառայող հայազգի ոստիկան Հարություն Թոփուզյանին և գիշերը նրան տանջամահ անում: Զեյթունցիների վճռական բողոքի հետևանքով կայմակամը պաշտոնանկ է արվում և Մարաշում բանտարկվում: Սակայն քիչ անց զեյթունցիք տեղեկանում են, որ հանցագործը պատժված չէ և ազատ շրջում է Մարաշում: Արդար ցասումով լցված նրանք հարձակվում են կառավարական պաշտոնատան վրա, հիմնահատակ քանդում այն, այրում մզկիթը: Դրանից հետո Զեյթունը վայելում է երեք տարվա անկախություն: Գրքի հաջորդ գլուխներում լրացուցիչ փաստեր կան Պապիկ իշխանի, այդ հանրահռչակ զեյթունցու քաջագործությունների մասին, որին սիրաշահելու նպատակով սուլթան Համիդը 1879-ին սուլթանական իրադեով նրան ներում է շնորհում, ընտրում քաղաքապետության նախագահ:

Աշխատության առավել արժեքավոր մասը «Զեյթունի 1895-ի ահեղ ճակատամարտը» բաժինն է, որն սկսվում է Գագիկ Օզան-

[2] Հուշիկք Զեյթունի, էջ 81:

յանի ներածականով: Հայ ազատագրական շարժման ընդհանուր խորքապատկերի վրա ներածականի հեղինակը տալիս է Զեյթունի 1895թ. ապստամբության գնահատականը, նշում նրա տեղն ու դերը ընդհանուր շարժման մեջ: Չափազանց բարձր գնահատելով այդ ապստամբության նշանակությունը, նա իրավացիորեն գրում է. «Վերջին մեծ պատերազմը տեղական բնույթ ունենալ է և ասկից առաջ հաճախակի մղված պարբերական կռիվներուն համաժամանակ շարունակությունը ըլլալե ավելի, համազգային, համահայկական էր...»[1]: Կ.Տեր-Հակոբյանի հիշողությունների հիման վրա տալով ռազմական գործողությունների նկարագիրը և շեշտը դնելով այդ գործողությունների կարևորագույն դրվագների վրա /Բերդիս-չայի կռիվը, թուրքական զորանոցի գրավումը, Չուգուր-Հիսարի, Անարունի, Ենիճե-Գալեի և այլ կռիվները/՝ Մ.Վարժապետյանն իր աշխատության այս բաժինն ավարտում է եվրոպական հյուպատոսների միջամտությամբ պայմանագրի կնքումով:

Աշխատության համապատասխան հատվածներից կարելի է հետևություն անել, որ ապստամբության ղեկավարների գերակշռող մասը տուրք էր տալիս այն թյուր մտայնությանը, թե Զեյթունի հարցը կապ չունի ընդհանրապես Հայկական հարցի հետ: Այսպես՝ խոսելով ապստամբության վեց ղեկավարների /Ավագ Չաքրյան, Ավետիք Կեսղնյան, Հարություն Չոփուրյան և ուրիշներ /թյուրիմացաբար փախուստի և մեկ այլ հայաշատ քաղաքում ապաստան գտնելու մտադրության մասին, Մ.Վարժապետյանը գրում է. «Անոնք կարծեր էին, թե Համիդի ծրագիրն էր Զեյթունը ջնջել ու չէին խորհիր, որ կարմիր սուլթանին միակ սկեռակետն էր ընդհանուր հայության փճացումը, որով և ոչ մեկ տեղ կրնային ապահովություն գտնել»[2]: Այդ նույն մտայնությունը երևան է գալիս նաև հյուպատոսների ներկայացրած թուրքական կառավարության նախնական առաջարկները քննարկելիս: «Գիշերը գումարվեցավ մեծ ժողով մը, ուր թեր ու դեմ կարծիքներու փոխանակութենե մը վերջ, համոզվեցան, թե՝ Զեյթունի խնդիրը Հայկական խնդրին հետ որևէ կապակցություն մը չէ ունեցած և որոշեցին տրվելիք պատասխանները», - գրում է նա:

[1] Նշվ. աշխ., էջ 133:
[2] Նշվ. աշխ., էջ 186:

Մ.Սեմերջյանն իր աշխատությունում գրում է, որ հյուպատոսների հետ հաշտության պայմանագիր կնքելիս գործուն մասնակցություն են ունեցել նաև հնչակյան գործիչները, և պայմանագրի առաջին երեք կետերը վերաբերել են նրանց ապահով եվրոպա մեկնելուն, իսկ գործիչները Եվրոպա են մեկնել պայմանագրի կնքումից / 1896թ. հունիսի 28/ հետո միայն: Ի դեպ, այդ նույն կարծիքին է նաև հենց ինքը՝ Աղասին: Սակայն, հակադրվելով վերոհիշյալներին, Մ.Վարժապետյանը պնդում է, որ հնչակյանները Եվրոպա են մեկնել հյուպատոսների Զեյթուն ժամանելուց երկու օր հետո և չեն մասնակցել պայմանագրի կնքմանը, իսկ պայմանագրի առաջին երեք կետերը, որոնք հիշատակված են Մ.Սեմերջյանի գրքում, բացարձակապես հիմնազուրկ են և հորինված:

Ճիշտ է, Մ.Վարժապետյանը չի ժխտում , որ հյուպատոսների հետ հանդիպման առաջին օրը զեյթունցիների պատգամավորության կազմում էին նաև Աղասին, Հրաչյան և Ապահը, բայց...«Հետևյալ օրը նույն պատգամավորական խումբը կրկին ժողովատեղին գնաց. երբ հրավիրվեցան գումարումի սրահը, զեյթունցիք տեսան, որ հնչակյան երեք գործիչները ներկա չեն հոն, ուստի փութացին պատճառը հարցնել. հյուպատոսները պատասխանեցին, թե անոնք քանի որ բնիկ զեյթունցի չեն և օտարահպատակ են, չեն կրնար այս կարգի պաշտոնական ժողովներու ներկա գտնվիլ և թե անոնց մասնավոր հրաման եկած է Թուրքիո հողեն դուրս ելնելու, ուստի իրենց մյուս ընկերներուն հետ բանակը ղրկված են, որ վաղը առավոտ ապահովությամբ ճամփա հանվին իրենց տեղերը վերադառնալու համար: Եվ ստուգիվ, հնչակյան գործիչները հյուպատոսներուն Զեյթուն մտնելեն օր մը վերջ, կատարյալ ապահովությամբ ճամփա հանվեցան»[3]:

Թերևս դժվարանայինք առարկել Մ.Վարժապետյանին, եթե Աղասին չվկայեր, որ իրենք Ֆրանսիա մեկնեցին պայմանագրի կնքումից հետո: Ճիշտ է, նրանք պաշտոնապես չմասնակցեցին բանակցություններին և իրենց ստորագրությունը չդրեցին պայմանագրի տակ, բայց հետևում էին բանակցությունների ընթացքին: -

[3] Նշվ. աշխ., էջ 190-191:

* * *

Զեյթունի 1895-ի ապստամբության գիտական ուսումնասիրության համար մեծ է Զեյթուն ժամանած հնչակյանների ղեկավարի՝ Աղասու աշխատության արժեքը[1]:

Աղասին /Կարապետ Թուր-Սարգիսյան/ ծնվել է 1871-ին, Հաճընում: Տեղի միացյալ վարժարանն ավարտելուց հետո նա մտնում է Կոստանդնուպոլսի Կենտրոնական վարժարանը: 1890-ի Գում-Գաբուի դեպքերից հետո երկու անգամ բանտարկվում և միջնորդությամբ ազատվում է: «Տորոսցի» ստորագրությամբ աշխատակցում է հնչակյան թերթերին: Եղել է համբավավոր հնչակյան Համբարձում Պոյաճյանի /Մեծն Մուրադ/ անձնական քարտուղարը: 1891-ի աշնանը, երբ Կենտրոնականի չորրորդ դասարանում էր, դատապարտվում է մահվան, սակայն հասցնում է փախչել Եվրոպա:

1896-ին, Զեյթունի ապստամբությունից հետո Աղասին ռուսական հյուպատոս, գնդապետ Յակով Միանսկու աջակցությամբ անցնում է Փարիզ, ծանոթանում Նուբար փաշայի հետ, երկու տարի ապրում նրա մոտ և նրա մեկենասությամբ ու Արշակ Չոպանյանի թարգմանությամբ 1897-ին Փարիզում ֆրանսերեն լեզվով հրապարակում իր աշխատությունը: Գրքի հայերեն տարբերակը նա հրատարակության է պատրաստում 1938-ին, որը սակայն լույս տեսավ նրա մահից 27 տարի հետո միայն՝ 1968-ին, Բեյրութում:

Ճիշտ է, չպետք է համաձայնել գրքի հայերեն տարբերակի հրատարակիչ հանձնախմբի առաջաբանում արտահայտած այն մտքին, թե Աղասու գիրքը տալիս է մեզ «ամբողջական և վերջնական պատմությունը 1895-ի Զեյթունի ապստամբության և հաղթանակին», բայց անուրանալի է, որ այն պատմահուշագրական, պատմական վկայության բնույթի մի չափազանց արժեքավոր և ինքնատիպ վավերաթուղթ է:

«Պատմական նկարագրություն» բաժնում Աղասին համառոտակի կանգ է առնում Զեյթունի պատմական անցյալի և առավել

[1] Աղասի. Զեյթուն և իր շրջանակները /նկարագրություն աշխարհագրական, պատմական և պատերազմական Ռուբինյան թագավորության անկումնե մինչև մեր օրերը/. Բեյրութ, 1968:

հանգամանորեն՝ 1862-ի ապստամբության վրա, աղբյուր ունենալով այդ ապստամբության գլխավոր գործիչների պատմածները անձնական հանդիպումների ժամանակ: Աղասին նույնպես միամտաբար կարծում է, որ «Նապոլեոն Գ ոչ միայն փրկեց Զեյթունը, այլև հետո դիտավորություն ուներ Լիբանանի առանձնաշնորհումը մտցնել նաև այնտեղ, քրիստոնյա կառավարիչի մը իշխանության ներքո, բայց չկարողացավ իրականացնել ֆրանկ և պրուսական պատերազմին պատճառով»[2]:

Ուշադրության արժանի են Աղասու բերած մի քանի վկայությունները, որպիսիք Զեյթունի մյուս պատմագիրների մոտ չեն հանդիպում: Այսպես. ապստամբության ղեկավարներից մեկի՝ իշխան Ղազար /Հազոր/ Շովրոյանը, անձնական հանդիպումներից մեկի ժամանակ Աղասուն պատմում է, որ երբ ապստամբությունից հետո իրենք բանտարկված էին Պոլսում, բազմաթիվ նամակներ հղեցին Պատրիարքարան, սակայն ոչ մի պատասխան չստացան, և հսկիչ ոստիկանի խորհրդով դիմեցին կաթոլիկների պատրիարք Անտոն Հասունյանին: Այս անգամ օգնությունը չուշացավ: Ֆրանսիական դեսպանատան միջնորդությամբ բանտարկյալներն ազատ արձակվեցին: Ազատված բանտարկյալների պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ սուլթանի վառոդապետ Պողոս բեյ Տատյանը հարցնում է, թե ինչ եղանակով են զեյթունցիք այդքան չոր ու որակյալ վառոդ պատրաստում: Հետևում է իշխան Նազարեթ Սուրենյանի դիվանագիտական պատասխանը. «Պեյ, որքան որ ալ հայ եք և ձեր անունը լսած ենք, Սուլթանին մեկ պաշտոնյան եք: Կրնա ըլլալ, որ անոր պետքերուն գործածեք. շնորհ ըրեք, որ այդ մեկ փոքրիկ առավելությունը զոր ունինք օսմանյան բանակի վրա, գաղտնիք մնա մեր քով մեր ապահովության համար»[3]: Այնուհետև Ղ.Շովրոյանը վկայում է, որ իրենց պատվին ընդունելություն է կազմակերպում նաև ռուսական դեսպան Իգնատիևը: Ճաշկերույթից հետո, առանձնանալով զեյթունցիների հետ, դեսպանը հարցնում է, թե կարող են արդյոք նրանք ոտքի ելնել և օգնել Ռուսաստանին, եթե վերջինս պատերազմ հայտարարի Թուրքիային:Զեյթունցիք

[2] Նշվ. աշխ., էջ 104:
[3] Նույն տեղ, էջ 106:

պատասխանում են դրականորեն, պայմանով, որ Ռուսաստանը Զեյթունին տրամադրի մի ռուս զորավար և 200 000 ռուբի:

Աղասին շարադրում է նաև Ենիտյունյան Պապիկ իշխանի տասնամյա ապստամբության պատմությունը: Ապստամբության պատճառը Աղասու կարծիքով օսմանյան կառավարության՝ Զեյթուն մուտք գործելուց հետո այն նենգությամբ նվաճելու ձգտումն էր՝ գյուղաքաղաքի ներքին կարգն ու բարքերը խառնելու և ժողովրդի զինվորական ոգին մարելու միջոցով: Այդ նպատակով, ինչպես նշում է Աղասին, թուրքական իշխանությունները սկսեցին խաղալ իշխանների հեղինակության հետ, մեծարել շահամոլ մարդկանց՝ նրանցից կորզելով քաղաքի գաղտնիքները: Երկպառակության արմատակալմանը նպաստեցին նաև Զեյթուն թափանցած հայ բողոքական և կաթոլիկ քարոզիչները:

Աղասու աշխատության առավել արժեքավոր մասը երկրորդ՝ «Վերջին ապստամբությունը» բաժինն է, ուր մանրամասնորեն տրված է 1895-1896 թվականների ապստամբության պատմությունը: Հակառակ Զեյթունի մյուս պատմագիրների, բոլորովին այլ կերպ է ներկայացնում Աղասին Գարանլըգ-դերեի խորհրդակցությունը, ուր որոշում ընդունվեց մինչև վերջին շունչը կռվել թուրքական զորքերի դեմ:

Խորապես վիրավորված Մ.Սեմերջյանի՝ իր հասցեին արված քննադատությունից, Աղասին նրա աշխատության՝ ժողովին վերաբերող մասը համարում է ճարտարորեն հորինված սուտ և անհիմն ցնդաբանություն, որ ժողովում իրեն ոչ ոք չի հարցաքննել , և նախագահն էլ Բարդուղիմեոս վարդապետը չի եղել, բացասական գծերով օժտելով նաև վերջինիս: Մ.Սեմերջյանի գրքում իր մասին պարունակած տեղեկությունները Աղասին հռչակում է միտումնավոր, կուսակցական չարամտությամբ և փառամոլական ստահոդությամբ գրված, որի սնուցիչը, իբր, հույժ տգետ Բարդուղիմեոս վարդապետն էր:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ Աղասու պնդումները միանգամայն հիմնավոր են, քանի որ ինքը՝ Մ.Սեմերջյանն ապստամբության մասնակից չի եղել: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նրա գործը գրված է հավաստի տեղեկությունների հիման վրա, ճիշտ է՝ Աղասուն հակառակ հոսանքի ներկայացուցիչներից վերցված: Իսկ, ինչպես տեսանք, հնչակյաններին չհամակրողները քիչ չէին: Մեր կարծիքով, Աղասին, որը միտում ունի ողջ ապստամբության նախապատրաստումն ու ղեկավարումը վերագրել իրեն և իր կուսակցությանը, կցանկանար գլխավոր գործող անձ հռչակվել նաև Գարանլըգ-դերեի հույժ կարևոր ժողովում, մի բան, որին խանգարում է Մ.Սեմերջյանի իրապատում շարադրանքը և առաջ բերում Աղասու զայրույթը: Կարևոր են, սակայն, Աղասու մի շարք փաստագրական ճշգրտումներ: Այսպես, ըստ Մ.Սեմերջյանի, հիշատակված ժողովը տեղի է ունեցել սեպտեմբերի 16-ին, Բերդիս-չայի կռիվը՝ 26-ին, զորանոցի գրավումը՝ նոյեմբերի 17-ին: Աղասին ուղղում է մոտ մեկ ամսվա տարբերությունը՝ համապատասխանաբար հանձնարարելով հոկտեմբերի 12-ը, հոկտեմբերի 15-ը և հոկտեմբերի 18-ը: Մ.Սեմերջյանի հիշատակած վեց գործիչներից Նշանի /Ղազարոսյան/ և Կարապետի /Սուքիասյան/ փոխարեն նա տեղադրում է Միհրանին /Գայյան/ և Ասլանին, առաջիններին համարելով քաջ ասպատակներ ու իր թիկնապահներ, բայց ոչ ապստամբության պարագլուխներ:

Աղասին նշում է, որ հոկտեմբերի 19-ին, զորանոցի գրավումից հետո, կազմվեց Զեյթունի ժամանակավոր կառավարությունը՝ բաղկացած ընդհանուր և վարչական գործադիր ժողովներից: Դրանից զատ կազմվում է նաև Պատերազմական խորհուրդ: Կասկած են հարուցում Աղասու տվյալները թուրքական բանակի թվական կազմի և կորուստների մասին: Ըստ նրա՝ կանոնավոր զորքի թիվը 55 հազար էր, այդքան էլ խառնամբոխ, Զեյթունի վրա արշավող օսմանյան բանակի թիվը 110 հազար էր, որի տրամադրության տակ կար 13 թնդանոթ: Թուրքական բանակի 36 հազար կորստի դիմաց զեյթունցիները տվեցին ընդամենը...60 սպանված[1]: Պատմագրի թեկուզ հենց այս թվերը սասանում են ընթերցողի հավատը նրա շատ պատմածների ու հավաստիացումների նկատմամբ:

Հատկանշական է, որ 334-րդ էջի ծանոթագրության մեջ Աղասին գրում է, թե հետագայում Ավետիս Նազարբեկյանը և Հրաչյա Մարալը Օքսֆորդում անգլերենով հրապարակել են մի գիրք, որի մեջ Զեյթունի ամբողջ ապստամբությունը ներկայացված է

[1] Աղասի, էջ 260:

իբրև Հրաչյա Մարալի գործը, չի նշված ոչ միայն Ապահի, Մլեհի, Միհրանի, այլև իր՝ Աղասու անունը, որի վկայականը գրված է հենց Նազարբեկյանի ձեռքով: Նման վերաբերմունքի պատճառը Աղասին համարում է կուսակցական կրքերով կուրացած լինելը և ավելացնում, որ Զեյթունի մեծ ճակատամարտին Հրաչյան ներկա էլ չէր, այլ թաքնված էր Ֆրնուզի լեռներում: Աղասին ձգտում է բանը պատկերել այնպես, թե իբր մեծ տերությունների հյուպատոսները միջամտել են ոչ թե հայերի, այլ սուլթան Աբդուլ Համիդի աղաչանքով, որն իբր այդ ճանապարհով ձգտում էր ազատել Զեյթունում գամված և օրըստօրե հալչող թուրքական 5-րդ բանակը և այն նետել Թուրքիայի վրա արշավանքի պատրաստվող հունական զորքերի դեմ:

Հակադրվելով Մ.Սեմերջյանին և Կ. Տեր-Հակոբյանին /Մ.Վարժապետյանին – Մ.Կ./Աղասին պնդում է, թե ինքը մասնակցել է պայմանագրի կնքմանը և առաջինն ինքն է ստորագրել պայմանագրի տակ: Կարելի է, ուրեմն, եզրակացնել, որ Զեյթունի 1895-ի ապստամբության ժամանակ գոյություն է ունեցել երկու հակադիր հոսանք: Զեյթունի դեմոկրատական լայն խավերը սկզբունքորեն հակադրվել են հնչակյանների անհեռատես գործելակերպին՝ դրան հակադրելով դարերով փորձված ու կշռադատված իրենց սեփական ռազմավարությունը: Պետք է ենթադրել նաև, որ ապստամբության բուն պրոցեսում տարաձայնություններ են ծագել հենց իրենց՝ հնչակյան գործիչների միջև:

* * *

XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման մի շարք հարցեր շոշափված են ժամանակի նշանավոր հասարակական գործիչ, լրագրող և պատմաբան Սարուխանի /Առաքել Սարուխանյան/ «Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում» ծավալուն աշխատության մեջ[1]: Գիտական շրջանառության մեջ դնելով Ազգային սահմանադրության, ինչպես նաև Հայկական հարցի և հայ ազատագրական շարժման վերաբերյալ մեծաքանակ փաստական նյութ, օգտագործելով հայերեն, ռուսերեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով բազմազան գրականություն, հեղինակն ստեղծել է ըստ ամենայնի արժեքավոր մի գործ: Հրատարակված է, սակայն, աշխատության միայն առաջին հատորը:

Սարուխանը թռուցիկ կանգ է առնում Զեյթունի 1862-ի իրադարձության վրա, դրա պատճառ համարելով այն ոգևորությունը, որ ապրեցին զեյթունցիները, երբ Ֆրանսիան Լիբանանի կաթոլիկ մարոնիտներին «ինքնավարություն» շնորհեց՝ պատժելով մահմեդական ջարդարարներին: Ապստամբության բարեհաջող ավարտը նա համարում է ֆրանսիական միջամտության արդյունք: Տարվելով Ֆրանսիան «ազատարար», «բարենորոգիչ» պետություն ճանաչելու պատրանքով, սխալվում էր, անշուշտ, Սարուխանը, Լեոյի արտահայտությամբ հայ կաթոլիկ հասարակության այդ ամենից կարևոր գրական ուժը՝ գրելով. «Ֆրանսիան երկար ժամանակից ի վեր համարվում էր և իրոք էր՝ ոչ միայն առանձնապես կաթոլիկների, այլև ընդհանրապես քրիստոնյաների պաշտպանը Թուրքիայում: Նա այս դիրքով շատ անգամ է միջամտել Թուրքիայում՝ հօգուտ ընդհանուր բարենորոգումների»[2]:

Աշխատության մեջ շոշափվում են արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքների՝ թուրքահայ խնդրին վերաբերմունքի հարցերը, սահմանազատվում «Մշակ»-ի, «Մեղու»-ի և «Փորձ»-ի տարբեր մոտեցումները: «Մշակ»-ի կոչը արևմտահայերին՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար ձայն բարձրացնելու և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մասին, Սարուխանը համարում է «ծայրահեղ հոռետեսություն մահմեդական հովանավորության մասին», իսկ պահպանողական «Մեղու»-ի հորդորները՝ հանդարտ մնալու, մտավորապես և բարոյապես զարգանալու և ապագա տաճկահայկական քաղաքական մարմին կազմելու մասին՝ «ծայրահեղ լավատեսություն թուրքահայի ներկայի և մանավանդ ապագայի մասին»: Միջին ճանապարհ, նրա կարծիքով, ուզում էր ընտրել «Փորձ» ամսագիրը, որը կոչ անելով թուրքահայերին կռվով ձեռք բերելու իրենց իրավունքը, շտապում էր պարզաբանել, թե կռիվ ասելով չպետք է հասկանալ հեղափոխություն կամ ապստամբություն:

[1] Ա.Սարուխան. Հայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում /1860-1910/, հ. Ա. Թիֆլիս, 1912:

[2] Նշվ. աշխ., էջ 93:

Չափազանց հետաքրքրական է Սարուխանի կարծիքը արևմտահայերի վերաբերմունքի մասին՝ արևելահայերի վերոհիշյալ հորդորների վերաբերյալ: «Թուրքահայերն ընդհանրապես շատ քիչ էին ծանոթ ռուսահայ լրագրության»,- գրում է նա,- և այն փոքր մասն էլ, որ ծանոթ էր, զարմանք էր հայտնում, թե ինչպես կարելի էր նրանցից պահանջել այն շարժումը, որ հիմնական գաղափարն էր Գր. Արծրունու և Գամառ Քաթիպայի, այն էլ «այժմ կամ երբեք» ինչպես գրում էր Արծրունին:

«Ռուսաստանի օգնությանը դիմելու և մանավանդ նրան հպատակ դառնալու միտքը՝ Կ.Պոլսի գրագետ և ազգասեր դասի համար, այն ժամանակները, դավաճանության շատ մոտ մի գաղափար էր համարվում»[1],- շարունակում է Արծրունին: Նա ցավով է նշում, որ արևմտահայությունն ուներ այն սխալ ու միակողմանի կարծիքը, թե իբր հայապահպանման տեսակետից արևելահայերը դատապարտված էին կորստյան և միայն արևմտահայությունն է, որ հնարավորություն ունի պահպանելու ազգային դեմքը: Ռուսահայերի մասին այս և այլ թյուր տեղեկություններն էին, ահա, որ, հեղինակի կարծիքով, արևմտահայերի համար ամենևին էլ գրավիչ չէին դարձնում Արծրունու առաջարկած ռուսական հովանավորությունը: Սարուխանը, սակայն, չի հապաղում փաստեր բերելու և ապացուցելու, որ բուն արևմտահայ ժողովրդի համակրանքը, որոնք իսկապես տառապում էին հարստահարություններից, Ռուսաստանի կողմն էր: Սարուխանը, սակայն, ժխտեց Զեյթունի ապստամբության ժողովրդական բնույթը, անտեսեց այդ ապստամբությունից հետո տեղի ունեցած մյուս շարժումները, սխալ մեկնակետ վերցրեց հասարակական հոսանքների զատորոշման հարցում:

Զեյթունի 1862-ի ապստամբությանը յուրօրինակ աննպաստ մեկնաբանում տվեց վաստակաշատ պատմաբան Ալեքսանդր Երիցյանը, ներկայացնելով այն իբրև մի աննշան միջադեպ, սոսկ կրոնական ընդհարում[2]:

[1] Նշվ. աշխ., էջ 142:
[2] Ալ. Երիցյան, Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա Սահմանադրությունը, «Փորձ», 1876, նո. 1-2, 1877, նո. 3-4:

* * *

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ ուրույն տեղ է գրավում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և դրա հետ կապված՝ հայկական հարցի արծարծումը: Այդ խնդրի վերաբերյալ նախախորհրդային շրջանում ստեղծվել է բազմազան գրականություն: Պետք էր, արդյոք, հայերը ռուսների կողմում մասնակցեին պատերազմին, ռուսական, թե Արևմտյան կողմնորոշում պետք է ընդունեին նրանք, դրական, թե բացասական հետևանքներ ունեցան Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերը հայերի համար, այս և այլ հարցեր են առաջ քաշել ժամանակի պատմաբանները և նորից արտահայտել հակասական ու իրարամերժ կարծիքներ:

Ժամանակագրական տեսակետից առաջնությունը պիտի տալ Բեռլին մեկնած հայկական պատգամավորության քարտուղար Սինաս Չերազի «Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն» աշխատությանը, որը լույս տեսավ Կ.Պոլսում, 1878 թվականին, Բեռլինից վերադառնալուց անմիջապես հետո: Հանրահայտ է, թե ինչպես արևմտյան մեծ տերությունները Բեռլինի կոնգրեսում աճուրդի դրեցին Հայկական հարցը և դարձան հայկական հետագա սարսափների անմիջական մեղսակիցներ: Որ հայ ժողովուրդը ոչինչ չշահեց Բեռլինի կոնգրեսից, որոշակիորեն երևում է հենց թեկուզ.այն բողոքագրից, որ հայկական պատվիրակությունը ներկայացրեց կոնգրեսի նախագահ Բիսմարկին: Բողոքագրում պատվիրակությունը ցավ էր հայտնում, որ հայ ժողովրդի միանգամայն օրինական պահանջը հաշվի չառնվեց: «Հայերը հասկացան, թե խաբվել են, թե նրանց իրավունքները չեն ճանաչվել, որովհետև խաղաղասեր են եղել և թե իրենց նախնիների եկեղեցու անկախությունը ու իրենց ազգությունը պահելով ոչինչ չեն ձեռք բերել... Հայ ժողովուրդը երբեք պիտի չդադարի աղմուկ հանելուց, մինչև որ Եվրոպան նրա պահանջներին արդար գոհացում չտա»[3]:

Մեծ տարբերություն տեսնելով Սան Ստեֆանոյի դաշնագրի և Բեռլինի կոնգրեսի ընդունած 16 և 61-րդ հոդվածների միջև, Չերազը գրում է, որ «...մենք ավելի շատ շահեցինք Պերլինի, քան

[3] Բողոքագրի լրիվ տեքստը տես՝ Սարուխանի նշված աշխատությունը, էջ 479: Նաև՝ Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:

Սան-Ստեֆանոյի մեջ: Եվ անհնար էր ավելի շահիլ լեզվով և գրչով... Սան-Ստեֆանոյի հոդվածն աղաչանքներէ ծնուած էր, Պերլին ամրապնդեց զայն յուր վեհավճռով»[1]:

Մեկնաբանելով այդ երկու հոդվածների տարբերությունը, Չերազը պնդում է, թե Սան Ստեֆանոյի հոդվածը հայ ժողովրդի հանդեպ պարտավորություններ էր դնում միայն Ռուսաստանի վրա, մինչդեռ բեռլինյան ձևակերպումը պարտավորեցնում էր եվրոպական վեց տերություններին: Եվ այդ հանգամանքը նա համարում էր ոչ թե չարիք, այլ, ընդհակառակը, մեծագույն բարիք: Նրա կարծիքով, եթե 16-րդ հոդվածով հնարավոր էր բարվոքել միայն այն հայերի դրությունը, որոնք գտնվում էին ռուսների գրաված տարածքում /իսկ այդ ժամանակ ռուսների ձեռքում էր միայն Կարինի շրջանը – Մ.Կ., է.Գ./ և որը համեմատաբար դյուրին էր, ապա 61-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում արմատական բարենորոգումներ իրականացնել ամբողջ Թուրքահայաստանի մասշտաբով: «Տարբերութիւնն անհուն է և մեր ազգ երախտապարտ է Սոլսբերիի» [2],- եզրակացնում է Չերազը:

Զարգացնելով իր դատողությունը, նա Կիպրոսի դաշնագիրը մի նոր դաշինք է համարում հայերի համար, այն դաշնագիրը, որի հետ է փաստորեն կապված Հայկական հարցի ծախողումը Բեռլինի կոնգրեսում: Միամտորեն հավատալով, որ Կիպրոսի դաշնագրի հետևանքով Հայաստանում առաջանալիք բրիտանական և ռուսական ազդեցությունների մրցակցությունից հայերը մեծ օգուտ պիտի քաղեն, Չերազն ավելացնում է, թե այդ դաշնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի լրացուցիչ պատասխանատվություն հայերի հանդեպ՝ ստանձնված Անգլիայի կողմից: «Պերլինի վեհաժողովեն մի ոսկեհանք շահեցանք,, մեզ անկ է խիզախել և հանել ոսկին»,- ամփոփում է իր խոսքը Չերազը: Արդ, շատ էլ խիստ չէր Լեոն՝ Չերազի այս աշխատությունը որակելով իբրև «քաղաքական անգրագիտության, համբակային միամտության և անուղղելի ռոմանտիզմի հուշարձան»[3]:

[1] Մ.Չերազ, Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն, Կ.Պոլիս, 1878, էջ 17:
[2] Նշվ. աշխ., էջ 18:
[3] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 28:

Ուշագրավ է նաև Բեռլին մեկնած հայկական պատվիրակության ոչ պաշտոնական անդամներից մեկի՝ Ստեփան Փափազյանի հուշերը[4], որը պարունակում է պատվիրակության գործունեությունը լուսաբանող արժեքավոր շատ մանրամասներ: Հուշերում բերված նոր փաստերը գալիս են հաստատելու այն իրողությունը, որ պատվիրակությունը ճիշտ ուղու վրա չէր, իր կազմով չէր համապատասխանում նման պատասխանատու առաքելության և զուրկ էր դիվանագիտական նրբանկատությունից: Հուշերի հրապարակման կապակցությամբ նույն «Անահիտի» հետագա համարներում լույս տեսավ ամսագրի խմբագիր, անվանի հայագետ ու հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի ընդարձակ հոդվածը, որտեղ հեղինակը Փափազյանի հայտնած նոր տեղեկությունների հիման վրա տալիս է 1878թ. հուզումնալի շրջանի գնահատականը և վերագնահատում այդ կապակցությամբ նախկինում արտահայտած իր իսկ մի քանի կարծիքները:

Գնահատելով Փափազյանի հուշերը որպես կարևորագույն փաստաթուղթ, Չոպանյանը գրում է, որ արժեքավորը ոչ թե նրա դատողություններն են, այլ մի շարք իրողությունների արձանագրված լինելը, որոնք թերևս առանց հուշատետրի ընդմիշտ անծանոթ կմնային: Չոպանյանը դատապարտում է պատգամավորության աններդաշնակությունը, ոստոստուն, հարափոփոխ, անհեռատես գործելակերպը և նրանց մեղադրում նրանում, որ նրանք, կուրորեն ենթարկվելով պատրիարքի հրահանգներին, հույսը ամբողջովին դրեցին արևմտաեվրոպական պետությունների օգնության վրա և անտեսեցին Ռուսաստանը: Նա գոհ չէ նաև Խրիմյանից, որն այն ժամանակ, իրոք, ուներ հակառուսական կողմնորոշում:

Չոպանյանն արտահայտում է այն հետաքրքիր միտքը, թե Բեռլինում հաջողության կարելի էր հասնել միայն այն դեպքում, եթե ծավալված դիվանագիտական գործունեությանը զուգորդեր բուն երկրում բռնկած ապստամբությունը, բայց որի ստվերն անգամ չկար: Այս իմաստով նա կտրականապես հակադրվում է Փափազյանի վարժապետական մտայնությանը, որ էր աղերսելով, խնդրելով տերությունների գութը շարժել: Չոպանյանը դատապարտում է պատվիրակությանը այն բանի համար, որ

[4] Ստ.Փափազյան, Պատգամավորի մը հուշատետրեն, «Անահիտ», Փարիզ, 1907:

նրանք չկարողացան օգտագործել Լոռիս-Մելիքովի դիրքը, մերժեցին Նուբար փաշայի թերևս իրագործելի չափավոր ծրագիրը և հրաժարվեցին նրա ծառայությունից:

Բիկոնսֆիլդը, որի հետ պատվիրակները մեծ հույսեր էին կապում և որի հետ հանդիպելու համար մեծ ճիգեր թափում, ժամանակի սղության պատճառով չի ընդունում նրանց, իսկ երբ ի վերջո համաձայնում է հանդիպել, պայման է դնում, որ զրույցի ժամանակ քաղաքական հարցեր չշոշափվեն: Վադդինգտոնը, որի վրա էր հայերի հիմնական հույսը, վեհաժողովի ժամանակ ոչ մի բառ չի արտասանում հայերի մասին: Իսկ ռուսական ներկայացուցիչները, որոնք պատրաստակամություն են հայտնում առաջ քաշելու հայկական հարցը, հայ պատվիրակների կողմից սառը վերաբերմունքի են արժանանում: Մինչդեռ, ըստ Չոպանյանի, «հայք պետք էր միշտ վարվեին ռուսին հետ իբրև դաշնակցի, իսկ Անգլիո հակառակությունը ջնջելու, գեթ մեղմացնելու համար՝ ջանային ամենայն ճարպկությամբ աշխատիլ: Եվ արդեն որքան իրենք փարած մնային ռուսին, այնքան Անգլիա՝ ռուսական միջամտության մշտական վտանգ մը տեսնելով Հայոց-մէ՝ պիտի ստիպվեր ավելի գոհացում տալ հայոց, որպեսզի պետք չունենային ռուսին դիմելու»[1]: Իրավացիորեն Կիպրոսի դաշնագիրը որակելով իբրև ակտ, որը հիմնովին հերքում էր հայկական ինքնավարության ձգտումը, Չոպանյանը մեղադրանքի խոսքեր է ասում Փափազյանի հասցեին, որն այդ ակտից հետո, չգիտես ինչ պատճառով, դառնում է ավելի անգլիասեր:

Չոպանյանը վերոհիշյալ հոդվածում անդրադառնում է նաև Մինաս Չերազի հուշերին՝ տպագրված ֆրանսիական «L, Արմենի»-ում, 1891-ին: Հոդվածագիրը մեկ անգամ ևս հավաստում է, որ պատգամավորությունը գլխավորապես Անգլիայի և Ֆրանսիայի լիազորների ետևից է վազել և չափազանց քիչ՝ ռուսների: Կշռադատելով փաստերը՝ նա գալիս է այն համոզման, որ հորիզոնի վրա կար միայն ռուսական պաշտպանության նշույլը, որը հեռու էր իդեալական լուծում լինելուց, բայց միակ դրականն էր և թուրքական տիրապետության տակ մնալուց անհամեմատ գերադասելի: Ռուսական քաղաքականությունը ճիշտ ըմբռնելու

[1] Ա.Չոպանյան, Ստեփան Փափազյանի հուշատետրը, «Անահիտ», Փարիզ, 1907, էջ 166:

տեսակետից արժեքավոր են Չերազի հուշերի՝ Գորչակովի և Շուվալովի հետ հանդիպումներին նվիրված մասերը:

Սիրալիր ընդունելություն ցույց տալով հայ պատգամավորներին՝ իշխան Գորչակովը, սակայն, որոշակիորեն տեղեկացնում է, որ ինքը իրավասու չէ խոստանալ պաշտպանելու հայերի այնպիսի պահանջները, ինչպիսին, ասենք, ինքնավարությունն է: Դա, համենայն դեպս, նախընտրելի էր, քան Վադդինգտոնի ֆրազներով մինչև վերջին որոպեն օրորելու քաղաքականությունը:

Հետաքրքրական է նաև կոմս Շուվալովի վերաբերմունքը: Վերջինս առաջարկում է հայերին՝ կազմել և քննարկման ներկայացնել պարզ և ընդունելի բանաձև, նախազգուշացնելով, որ վեհաժողովի նախագահ Բիսմարկը թույլ չի տա ոչ մի վիճաբանություն: Ավելին՝ Շուվալովն ինքն է առաջարկում նման բանաձևի հետևյալ նախագիծը. «Թուրք կառավարությունը հանձն կառնե Հայաստանի համար բարենորոգման միջոցներ ձեռք առնել, աջակցությամբ եվրոպական հանձնախմբի մը և անոր գործադրությանը պիտի հսկե»[2]: Այնուամենայնիվ, հայ պատվիրակները նախընտրեցին, որ իրենց փաստաբանը Վադդինգտոնը լինի:

Վերագնահատելով նախկինում արտահայտած իր կարծիքը Բեռլինի վեհաժողովի արդյունքների մասին, համաձայն որի, հայերն այնտեղ ոչինչ չէին շահել, Չոպանյանը գրում է. «Պատգամավորությունը չստացավ մեծագույն արդյունքը, որ կարելի էր՝ եթե Նուպարի կամ Մելիքովի պես անձնավորություն մը անոր գլուխն անցած ըլլար և եթե Ռուսիո հզոր ու բոլորանվեր աջակցությունն ապահոված ըլլար իր գործունեության, բայց ստացավ արդյունք մը, որ նշանակության արժանի է, եթե պատգամավորությունը բնավ գացած չըլլար Պերլին, հավանական է, որ անգլիական դիվանագիտությունը բոլորովին պիտի ջնջեր Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը՝ առանց անոր տեղ Պերլինի դաշնագրին մեջ ոչինչ դնելու, և կամ գեթ 61-րդ հոդվածին վերջին ու կարևորություն ունեցող ֆրազը դնել չտալու պիտի հաջողեր»[3]:

[2] Նույն տեղում, էջ 171:
[3] Նույն տեղում, էջ 184:

* * *

Ինչպես վերը ասացինք, Հայկական հարցի պատմությունը, շատ կողմերով, իհարկե, թերի, լայնորեն լուսաբանված է Սարուխանի «Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում» աշխատության մեջ: Մեծ մասամբ ցուցաբերելով խոհուն մոտեցում հեղինակը, սակայն, երբեմն-երբեմն թույլ է տալիս աններելի սայթաքումներ: Այսպես՝ չնկատելով մեծ տերությունների զավթողական նպատակները, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի բռնկումը նա բացատրում է Ռուսաստանի՝ Թուրքիայում ապրող քրիստոնյաներին ազատագրելու ձգտմամբ: Այդ կապակցությամբ նաև գրում է. «Ալեքսանդր Բ. Ազատարար կայսրն՝ երբ տեսավ, թե Թուրքիան Եվրոպայի առաջարկած վերջին միջոցն էլ չընդունեց /խոսքը պետությունների 1877թ. մարտի 19-ի բարենորոգումների վերաբերյալ արձանագրության մասին է, ետ չընկրկեց և ապրիլի 6-ին պատերազմ հայտարարեց Թուրիքիայի դեմ, զենքի ուժով ձեռք բերելու համար այն, ինչ որ պետությունները չէին կարողացել անել համոզել ջանալով»[1]: Սարուխանը դատափետում է այն դիրքորոշումը, որ պատերազմի սկզբնական շրջանում բռնեցին Կ.Պոլսի հայ ազգային գործիչները: Ալեքսանդր երկրորդի բոլոր հայտարարությունները՝ Թուրքիայում ապրող քրիստոնյաներին ազատագրելու մասին, հօդս էին ցնդում, որովհետև պատերազմից անմիջապես հետո բրիտանական դեսպան Լեյարդին են այցելում թուրքահպատակ քրիստոնյաների հոգևոր պետերը և հայտնում, որ իրենք բոլորն էլ նախընտրում են թուրքահպատակությունը, քանի որ Ռուսաստանը կրոնի ազատության հարցում անհանդուրժող է, իսկ պատերազմը բնավ էլ իրենց ազատության նպատակը չի հետապնդում: Այդ նույնն է պնդում պատրիարք Ներսես Վարժապետյանը, թե հայերի շահերը նույնն են թուրքերի շահերի հետ, հայերը գանգատվելու ոչ մի առիթ չունեն և այլն: Նա առաջարկում է նույնիսկ ստեղծել հայկական զինված խմբեր՝ առաջխաղացող ռուսների դեմ թուրք զինվորների կողքին կռվելու համար և այդ առիթով նույնիսկ հրապարակում հատուկ շրջաբերական՝ առաջացնելով ժողովրդի զայրույթը:

[1] Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 184:

Սարուխանի արտահայտությամբ պատրիարքի այս «անքաղաքագիտական» հայտարարությունից հետո համանման ելույթներով հանդես են գալիս նաև կաթոլիկ հայերի ներկայացուցիչները, օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխանները: Չպետք է այստեղ աչքաթող անել մի կարևոր հանգամանք. թե Վարժապետյանը, թե մյուսները նման հայտարարություններից հետո Օսմանյան կառավարությանը կոչ էին անում անհապաղ իրագործել բարենորոգումները, որպեսզի իրենց հայտարարությունները հիմնավորվեն: Կարծում ենք, որ նման դիրքորոշումը ոչ թե դատարկ ռուսատյացություն էր, այլ թեև ոչ ռեալ, բայց որոշակի նպատակ հետապնդող քաղաքականություն, սուլթանին բարենորոգումների մղելու մի յուրահատուկ ճնշում:

Որ իրենց ասածը համոզմունք չէր, այլ քաղաքականություն, երևում է հենց թեկուզ նրանից, որ երբ լուրեր տարածվեցին գավառներում հայերի նկատմամբ թուրք զինվորների գազանությունների մասին, այդ նույն երեսփոխանները կրակոտ ճառերով հանդես եկան օսմանյան խորհրդարանում և մերկացրին թուրքական հոռի վարչակարգը: Որ Աբդուլ Համիդը իր հերթին ձգտում էր շահել հայերի համակրանքը և դրանով իսկ հույսեր էր ներշնչում նրանց՝ բարենորոգումների կապակցությամբ, հաստատում է նրա և Ն.Վարժապետյանի հանդիպումը: Պարգևատրելով հայոց պատրիարքին «Օսմանիե» առաջին կարգի շքանշանով և ընդգծելով իր «առանձնահատուկ սերը» հայ ժողովրդի հանդեպ Համիդն ավելացնում է. «Գիտեմ, որ հայ ազգս այս պատերազմին պատճառով շատ նեղություն կրեց. բայց պետք է հաստատ գիտնան, որ այս ամեն տառապանաց փոխարեն շատ աղեկ օրեր պիտի վայելեն և բաղդավոր պիտի ըլլան»[2]: Սակայն ռուսական հաղթական բանակի կողմից Ադրիանապոլսի գրավումը հիմնովին փոխում է իրավիճակը: Կ.Պոլսի ազգայինների մեծամասնությունը, պատրիարք Ն.Վարժապետյանի գլխավորությամբ արմատական շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան: Սարուխանը, վկայակոչելով եպ. Մ.Իզմիրյանի հետ ունեցած իր անձնական զրույցները, այն միտքն է հայտնում, որ

[2] Նշվ. աշխ., էջ 204:

Վարժապետյանի այդ շրջադարձը կատարվել է Մ.Խրիմյանի ճնշման ներքո, մի բան, որ մեզ անհավանական է թվում: Մեր կարծիքով ռուսական զորքի առաջխաղացման հետևանքով ստեղծվել էր քաղաքական մի իրադրություն, որտեղ պատրիարք Ն.Վարժապետյանը, ելնելով արևմտահայության կենսական շահերից, անպայմանորեն պիտի կողմնորոշվեր դեպի Ռուսաստան:

Բայց ահա 1878թ. հունվարի 19-ին կնքվում է Ադրիանապոլսի զինադադարի դաշնագիրը, որտեղ ոչ մի խոսք չկար հայերի մասին: Ներսես Վարժապետյանի հրահանգով Ադրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսճուգլյանը հանդիպում է կոմս Իգնատևին և տեղյակ պահում հայերի իղձերին: Ստանալով կոմսի հուսադրող պատասխանը՝ Ազգային ժողովի երեսփոխաններ Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը արտաքնապես որպես օսմանյան պաշտոնյաներ, բայց իրականում իբրև գաղտնի պատվիրակներ, մեկնում են Ադրիանապոլիս: Բացի այդ, աղերսագրեր են ուղարկվում Ալեքսանդր երկրորդի և իշխան Գորչակովի անուններով, որոնցով խնդրվում է արևմտահայերին տալ ինքնավարություն: Ստանալով Ալեքսանդր երկրորդի համաձայնությունը՝ հաշտության պայմանագրում հայերի դրության բարելավման վերաբերյալ առանձին կետ մտցնելու մասին, կոմս Իգնատևը՝ ելնելով կայսեր ուղղված պահանջներից, կազմում է 16-րդ հոդվածի մի նախագիծ և այդ մասին տեղյակ պահում հայ գաղտնի պատվիրակներին: Նախագծում ասվում էր. «...թուրքիո եվրոպական գավառոց մեջ տեղի ունեցած անկարգությանց և հարստահարությանց համանմանն ասիական գավառուց մեջ տեղի ունենալով, ասոր առաջքն առնելու համար սուլթանն երաշխավոր կկենա Ռուսիո կայսեր քով՝ որոշմամբ թե՝ Կովկասյան նահանգի սահմանակից հայաբնակ գավառներուն /Կարին, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Սեբաստիա և այլն/ վարչական ինքնօրինություն մը տա, վիլայեթի օրինաց մեջ հարկ եղած փոփոխություններն ընելով և զայն ապահովել իրական երաշխավորությամբ սուլթանին»[1]:

Հայտնի է, որ հիշյալ նախագիծը Սան Ստեֆանոյի պայմանագրում, որը կնքվեց 1878թ. փետրվարի 19-ին, չմտավ: Ռացիոնալ հատիկը՝ ինքնավարության պահանջը, 16-րդ կետից դուրս մնաց: Մեկնաբանելով դրա պատճառները, Սարուխանը նշում է երկու պահ՝ թուրքական պատվիրակների ընդդիմանությունը և Անգլիայի սպառնալիքների հետևանքով քաղաքական իրադրության սրվելը: Որպես ծախողման հիմնական պատճառներից մեկը, հեղինակը չի ներկայացնում Ռուսաստանին, որին երբեք էլ ձեռնտու չէր Արևելահայաստանին սահմանակից տեսնել հայկական մի ուրիշ ինքնավարություն: Պատճառները թվարկելիս նա սոսկ նշում է, թե ռուս ներկայացուցիչները նման հոդված մտցնելու մասին կտրուկ հրահանգ չունեին:

Մեջբերելով Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, ինչպես նաև հարակից 25-րդ և 27-րդ հոդվածները՝ Սարուխանը փորձում է տալ դրանց գնահատականը: Նա գրում է, որ սկզբում հայերը հուսախաբվեցին, երբ տեսան, որ ինքնավարության պահանջը դուրս է մնացել, բայց հետո, ոչ առանց հիմքի, նրանց վրա տիրեց գոհունակություն և ուրախություն, քանի որ «Հայաստան» անունը պաշտոնապես ընկալվեց Թուրքիայի կողմից, թուրքերը խոստանում էին անհապաղ բարենորոգումներ կատարել, իսկ չկատարելու դեպքում հայերը հնարավորություն էին ստանում դիմել Ռուսաստանին:

Համեմատելով Իգնատևի նախագիծն ու ընդունված հոդվածը, Սարուխանն իրավացիորեն գտնում է, որ առաջինի ինքնավարության որոշակի արտահայտությունը փոխարինված է «տեղական պետքերի պահանջած բարվոքումներ և բարենորոգումներ» առածգական իմաստով: Պատասխանելով այն հարցին, թե ինչու Ռուսաստանը չպնդեց, որպեսզի Հայաստանին ևս, ինչպես Բուլղարիային, ինքնավարություն տրվի, Սարուխանը բերում է անհամոզիչ փաստարկումներ, գրելով, թե հայերը ոչ կրոնակից և ոչ էլ ցեղակից էին ռուսներին, բացի այդ, Ռուսաստանը զենքի էր դիմել Եվրոպական Թուրքիայի ցեղակից քրիստոնյաների ազատության համար միայն: Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ 16-րդ հոդվածի կատարման ռեալ երաշխավորություն էր ռուսական զորքի վեց ամիս հետո միայն գրված տարածքներից հեռանալը, այսինքն՝ բարենորոգումները պիտի անցկացվեին ռուսական զորքի ներկայությամբ:

[1] Նշվ. աշխ., էջ 285:

Սարուխանը տալիս է հայ ազգային գործիչների՝ Բեռլինի կոնգրեսին նախորդած հուզումնալի ժամանակաշրջանի տենդագին նախապատրաստական աշխատանքի մանրակրկիտ պատմությունը, համադրում այդ շրջանում հանդես եկած տարբեր ծրագրերը, հոսանքները, գնահատում դրանք, նկարագրում Մ.Խրիմյանի պատվիրակության «շուրջերկրյա» ճանապարհորդությունը, նրանց հանդիպումները եվրոպական մեծ տերությունների պետական գործիչների հետ, ջանում բացահայտել այդ պետությունների դիրքորոշումը: Ասում ենք «ջանում», որովհետև միշտ չէ, որ նրան հաջողվում էր շիտակ իմաստով հասկանալ եվրոպական գործիչների այս կամ այն արտահայտությունը և դրա հետ կապված՝ տվյալ պետության բռնած դիրքը Հայկական հարցում:

Սարուխանը հայերի համար դժբախտություն է համարում 1878թ. հունիսի 4-ին Թուրքիայի և անգլիայի միջև կնքված Կիպրոսի դաշնագիրը, որով, ի դեմս իրար թշնամի Անգլիայի և Ռուսաստանի, հայերը ձեռք բերեցին երկու «պաշտպան»: Սարուխանի ստվար աշխատությունն ավարտվում է Բեռլինի կոնգրեսի կողմից 61-րդ հոդվածի ընդունմամբ, որի մասին նա դեռ նախօրոք այն կարծիքն էր հայտնել, թե՝ համեմատած 16-րդ հոդվածի հետ, 61-րդ հոդվածում կատարված փոփոխություններն աղետալի էին:

* * *

Նախախորհրդային շրջանի իր մի քանի աշխատություններում հայ ազատագրական շարժումներին անդրադարձել է բազմավաստակ պատմաբան Լեոն /Առաքել Բաբախանյան/: 1876-1903 թթ. ժամանակահատվածի վերլուծությանն է նվիրված նրա «Գրիգոր Արծրունի» եռահատոր աշխատության երկրորդ հատորը[1]: Նշված ժամանակահատվածը նա համարում է մեծ վերափոխումների շրջան, երբ Ռուսաստանը, ազատագրվելով ճորտատիրության կապանքներից, պայքար է սկսում Արևելքի բռնապետությունից քրիստոնյա փոքր ազգերին ազատագրելու համար: Լեոն այդ տարիները մեր պատմության համար անվանում է «անկյունաքար», հայ ժողովրդի մտավոր կարողությունների

[1] Լեո, Գրիգոր Արծրունի, հ.2, Թիֆլիս, 1903:

դրսևորման «ոսկե շրջան», և այդ ժամանակաշրջանի ամենախոշոր գործիչներից մեկը Գրիգոր Արծրունին էր՝ իր «Մշակով»: Այս դեռ Լեոյի այն շրջանն է, երբ նա Ռուսաստանին համարում էր ճնշված քրիստոնյաների անկեղծ պաշտպան, իսկ Ալեքսանդր երկրորդին՝ «ազատասեր» ու «խաղաղասեր» կայսր, նրա սկսած պատերազմը Թուրքիայի դեմ՝ «Թուրքիայում մարդավայել կեցություն ստեղծելու» բարի կամքի թելադրանք[2]:

Աշխատության մեջ Լեոն պարզաբանում է արևելահայ տարբեր հասարակական-քաղաքական հոսանքների վերաբերմունքը օրվա հրատապ հարցի՝ թուրքահայ խնդրի հանդեպ: Նրա կարծիքով՝ հասարակական գործիչներից միայն Գրիգոր Արծրունին էր, որ իսկույն ըմբռնեց պահի կարևորությունը և 1876թ. կեսերից թուրքահայ խնդիրը դարձրեց «Մշակ»-ի հիմնական թեման: Լեոն ընդգծում է Արծրունու մեկնակետը՝ «Այժմ կամ երբեք»: Պատեհ առիթից արևմտահայերը պիտի օգտվեն և իրենց իրավունքները պաշտպանելու համար զենք պիտի վերցնեն, հույսը դնեն միայն Ռուսաստանի վրա, իսկ եթե հարկ լինի՝ նույնիսկ անցնեն նրա տիրապետության տակ:

Լեոն հակադրվում է Պետրոս Սիմոնյանցի պահպանողական «Մեղու»-ին, որը մեծ վայնասուն էր բարձրացրել «Մշակ»-ի դեմ՝ վերոհիշյալ մտքերի առթիվ: Բացարձակապես դեմ լինելով «Մշակ»-ի արտահայտած արևմտահայերի ապստամբության գաղափարին, «Մեղուն» ոչ մեղրածոր լեզվով գրում էր. «... եթե ծանծրացել են իրենց կյանքից, թող իրենց ժողովեն և կազմեն անհաղթելի սրբազան գունդ «Մշակ»-ի քաջ խմբագրի առաջնորդությամբ և երթան պատերազմ, տեսնենք թե առաջին թնդանոթի ձայնը որ ծակը կփախցնե նրանց»[3]:

Լեոն իրավացիորեն «հեքիաթ», անտեղյակության արդյունք է համարում «Մեղու»-ի երազանքը՝ կուլտուրական եղբայրակցության վրա թուրք-հայկական պետություն ստեղծելու մասին: Առարկելով մեղվականներին, որոնք մշակականներին մեղադրում էին նրանում, թե իբր ապստամբության նրանց կոչերը ոտքի կհանեն և կոտորել կտան թուրքահայերին, Լեոն գտնում է, որ «Կոտորածը ասիական Թուրքիայում «Մշակ»-ի առաջնորդները

[2] Նշվ. աշխ., էջ 398:
[3] Նշվ. աշխ., էջ 428:

չպիտի առաջացնեին, քանի որ կոտորածների ու հարստահարությունների համար հարկավոր էլ չի եղել, որ հայերը ապստամբեն»[1]:

Համանման քննադատության է արժանանում նաև 1876-ից Թիֆլիսում լույս տեսած «Փորձ» եռամսյա հանդեսը՝ Աբգար Հովհաննիսյանի խմբագրությամբ, քանի որ այդ ամսագիրը համարյա բառացի կրկնում էր «Մեղու»-ին: Նա նկատում է, որ «Փորձ»-ը չուներ կայուն համոզմունք, քանի որ մեղվական քարոզներից հետո տպագրում էր Ռ.Պատկանյանի ոգեշունչ երգերը: Նա զարմանալի է կոչում ամսագրի դատողությունները, որը գրում էր, թե իրավունքը ձեռք է բերվում կռվով և իսկույն ավելացնում, թե կռիվ ասելով չպետք է հասկանալ հեղափոխական միջոցներ, ապստամբություն:

Լեոն ջերմ համակիրն է Գր.Արծրունու այն հոդվածների, որոնք դեմ էին դուրս գալիս պոլսահայ բարձրաստիճան հոգևորականության քաղաքականությանը, «զզվելի» համարում ինչպես պատրիարք Ներսես Վարժապետյանի շրջաբերականը, որը քարոզում էր հայերին՝ զենքով փակել ռուսական առաջխաղացման ճանապարհը, այնպես էլ կաթոլիկ հայերի պատրիարք Անտոն Հասունյանի բռնած թուրքասիրական դիրքը:

Հատորի վերջում, սակայն, Լեոն վերագնահատում է Ներսես Վարժապետյանին՝ կապված պատրիարքի նոր, ռուսական կողմնորոշման հետ և, մեր կարծիքով, տալիս միանգամայն ճիշտ գնահատական: «Նա հասկացավ որպեսի ահագին նշանակությունը, հասկացավ, որ «այժմ կամ երբեք» և սկսվեց գործունեության մի նոր շրջան, որ մոռացնել տվեց անցյալը և դարձրեց պատրիարքին քաջ ու աներկյուղ, իր հոտին անձնվեր մի հովիվ, որ պիտի հռչակվեր իբրև հայության ամենանշանավոր, նվիրական գործիչներից մեկը, մեկը այն մարդկանցից, որոնք հազվագյուտ են մեր պատմության մեջ»[2]:

Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, որը ձևակերպվեց Ներսես Վարժապետյանի գործուն մասնակցությամբ, Լեոն գնահատում է հետևյալ կերպ. «1878 թվի փետրվարի 19-ը հայոց ժամանակից պատմության անկյունաքարն է կազմում, որից սկսվում էր մի ամբողջ նոր դարագլուխ»[3]:

Հոդվածը բարձր գնահատեց նաև Արծրունին, այն համարելով նահանգական ինքնավարության երաշխիք: Լեոն Ներսեսին գովաբանում է նաև Բեռլին վաղօրոք պատվիրակներ ուղարկելու առիթով: Նա միանում է Արծրունուն, որը «Մշակում» պատրիարքի դեմ նախորդ կատաղի հարձակումներից հետո, հիացմունք էր հայտնում Ն.Վարժապետյանի՝ Բ. Դռան ներկայացուցիչ Աբրո էֆենդուն տված պատասխանի կապակցությամբ[4]: Ցուցադրելով Անգլիայի բռնած անբարենպաստ դիրքը հայերի նկատմամբ՝ Լեոն Կիպրոսի դաշնագիրը հայերի համար համարում է 90-ական թվականների սարսափների հիմքը:

Հայ ազատագրական շարժումների վերաբերյալ նախախորհրդային շրջանի իր հետազոտությունները Լեոն ամփոփում է «Հայոց հարցի վավերագրերը» մեծարժեք ժողովածուով[5]: Աշխատությունը, որը լույս տեսավ առաջին աշխարհամարտի դժնդակ օրերին, երբ նորից հրապարակ էր նետվել Հայկական հարցը, ուներ գործնական մեծ նշանակություն: Բազմաշխատ պատմաբանը համապատասխան բացատրություններով ներկայացրել է այն բոլոր կարևորագույն փաստաթղթերը, որոնք այս կամ այն դարաշրջանում /սկսած 17-րդ դարից/ շոշափել են հայոց ազատագրության խնդիրները: Ժողովածուում տեղ են գտել գիտապատմական մեծարժեք այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են «Կերպ դաշնագրության ի մեջ երկուց ազգաց, ռուսաց և հայոց»-ը, Խորեն Նարպեյի՝ Ալեքսանդր Երկրորդին ներկայացրած ծրագիրը, «Ծրագիր կազմակերպական կանոնագրի օսմանյան Հայաստանի» Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը[6], հայկական պատվիրակության՝ Բեռլինի կոնգրեսին մաս-

[1] Նշվ. աշխ., էջ 433:
[2] Նշվ. աշխ., էջ 550:

[3] Լեո, Գրիգոր Արծրունի, հ.3, Թիֆլիս, 1905, էջ 47:
[4] Բ.Դռան պահանջին՝ Բեռլինից ետ կանչել Խրիմյանի պատվիրակությանը, Ներսես Վարժապետյանը պատասխանել էր, որ ինքը պատրաստ է ավելի շուտ կախվել պատրիարքարանի դռներից, քան այդ քայլին դիմել:
[5] Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
[6] Ի դեպ, այս կապակցությամբ Լեոն գրում է, որ հոդվածում բերված բարենորոգումների անորոշ խոստումը առաջին իսկ քայլից հայ գործիչները, այդ թվում նաև Արծրունին, ըմբռնեցին այն մտքով, թե Հայաստանը այդ հոդվածով պիտի ստանա ինքնավարություն: Մենք արդեն հիշատակել ենք, որ այդ հոդվածի մասին սկզբում խիստ բարձր կարծիքի էր նաև ինքը՝ Լեոն:

նակից տերությունների ներկայացուցիչներին ուղարկված բոլոր փաստաթղթերը, Կիպրոսի դաշնագիրը, Հայկական հարցին վերաբերող քաղվածքներ Բեռլինի վեհաժողովի արձանագրություններից, վեց պետությունների՝ 1880-ի սեպտեմբերի 7-ին Բ.Դռանը ներկայացրած հավաքական նոտան հայկական բարենորոգումների մասին, 1895թ. բարենորոգումների մայիսյան ծրագիրը և այլն:

Աշխատության առաջաբանում, սակայն, Լեոն կատարել է փաստազուրկ ենթադրություններ ու եզրահանգումներ: Այսպես, նա գրում է, թե իբր Նալբանդյանը 1860-ին Կ.Պոլսում հիմնադրել էր մի մարմին, որի գլուխ հետագայում կանգնել էր Հ.Սվաճյանը: Ծրագրվել էր համասլավոնական ապստամբությանը միանալու համար սկսել Զեյթունից, սակայն ապստամբությունից առաջ Նալբանդյանը ձերբակալվեց՝ Բակունինի հետ հարաբերություններ ունենալու համար:

Նրա կարծիքով, եթե Նապոլեոն Երրորդի բարենպաստ տրամադրությունը Զեյթունի համար մի նոր անկախ կայսրություն չստեղծեց՝ Լիբանանը թուրքական վայրագություններից ազատելուց հետո, ապա պատճառն այն էր, որ հարցը շուտով կրոնական կերպարանք ստացավ ու փակվեց[1]:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ուսումնասիրման համար վավերագրերի անգերագնահատելի ժողովածու է նաև Գյուտ քահանա Աղանյանցի «Դիվան հայոց պատմության» աշխատության 13-րդ հատորը, որը հրատարակվել է Թիֆլիսում, 1915-ին:

* * *

Հայ ազատագրական պայքարին պատմագիտական ուսումնասիրություն է նվիրել Ռաֆֆին /Հակոբ Մելիք-Հակոբյան/, որն այդ պայքարի ամենախոշոր գաղափարախոսներից մեկն էր և մեծատաղանդ գրող ու հրապարակախոս լինելուց բացի՝ հմուտ, գիտակ պատմաբան: Իհարկե, մեր նպատակից դուրս է տալ ազատագրական շարժումների վերաբերյալ Ռաֆֆու ողջ կոնցեպցիան, որը գլխավորապես արտահայտված է նրա գեղարվեստական ստեղծագործություններում և մասամբ՝ հրապա-

[1] Լեո, նշվ. աշխ., էջ 43-44:

ռակախոսական հոդվածներում: Խոսքն այստեղ միայն նրա մի ծավալուն պատմագիտական ուսումնասիրության մասին է[2]:

Աշխատության հենց սկզբում որոշակիորեն ուրվագծվում է Ռաֆֆու տեսակետը՝ թուրքահայերի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում: Տուրք տալով այն անհիմն մտայնությանը, թե վերջին ռուս-թուրքական պատերազմում ռուս զինվորի արյունը թափվեց սոսկ նրա համար, որպեսզի քրիստոնյա ժողովուրդներն ազատություն ստանան, Ռաֆֆին կոչ է անում օգնության հասնել արևմտահայ եղբայրներին, դուրս բերել նրանց անուսում և աղքատ վիճակից, հավատացնելով, թե «բարեսիրտ կառավարությունը մեզ չի արգելում օգնել նրանց, նա կցանկանա, որ մենք պատրաստենք Փոքր Ասիայում մի ժողովուրդ, որպես վահան անգլիական ազդեցության դեմ...»[3]:Խորաթափանցորեն նա նկատում է, որ Արևելյան հարցը պատմական խնդիր է, այն վերանալ չի կարող և պիտի ձգվի ազգերի պատմության հետ, ուստի թուրքահայը պետք է նախապատրաստվի և ձգտի օգուտ քաղել, երբ Արևելյան հարցը նորից կսրվի:

Ազատագրական շարժման խնդրում Ռաֆֆու ռուսական կողմնորոշումը միանգամից չձևավորվեց, այն ապրեց էվոլյուցիա: Դեռևս իր գրական ստեղծագործության երախայրիքի՝ «Սալբի» վեպի առաջաբանում /1887/ հեղինակն արտահայտում է ընդգծված հակառուսական տրամադրություն՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին դիտելով իբրև «հավիտենական ափսոսանաց արժանի անցք», հայոց պատմության ատյանի առջև հավերժ դատապարտելի անձնավորություններ հռչակելով Ներսես Աշտարակեցուն ու Լազար /Եղիազար/ Լազարյանին, որոնք Թուրքմենչայի պայմանագրից հետո կազմակերպեցին շուրջ 50 հազար պարսկահայերի գաղթ: «Խենթը» վեպում /1880/ քննադատելով պոլսահայ մտավորականության որոշ շերտի այն սխալ մտածելակերպը, թե հայերի համար ավելի նպաստավոր է թուրքական անկարգ կառավարությունը, քան մի բարեկարգ ու քաղաքակրթված կառավարություն, Ռաֆֆին Մ.Դուդուկչյանի բերանով հայտնում է այն համոզմունքը, թե ռուսների նոր պատերազմը թուրքահպատակ քրիստոնյաների ազատութ-

[2] Ռաֆֆի, Տաճկահայք /հայոց հարցը/, Վիեննա, 1913:
[3] Նշվ. աշխ., էջ

յան համար է, որոնցից ամենատանջվածը հայն է: Եթե հայերը գլուխ բարձրացնեն, ռուսներն ամեն կերպ կօգնեն նրանց: Վարդանի պատասխանի մեջ, սակայն, /ձին և ջորին պիտի կռվեն, իսկ մեջտեղում էշը կսատկի/, առկա է որոշ թերահավատություն ու կասկածամտություն:

«Տաճկահայքում» արդեն Ռաֆֆու ռուսական կողմնորոշումը դառնում է անսասան հավատամք:

Ռաֆֆին հանգամանորեն կանգ է առնում հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միջև կապերի թույլ լինելու, միմյանց կյանքին անհրաժեշտ չափով տեղյակ չլինելու վրա: Այդ տեսակետից նա չափազանց բարձր է գնահատում պատրիարք Մ.Խրիմյանի հրատարակած «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց»-ը և գտնում, որ այն ետ քաշեց անհայտության վարագույրը: Տեղեկագրի մանրամասն վերլուծությունը նրան բերում է այն համոզման, որ արտաքնապես Թուրքիան պաճուճվել է եվրոպական պետության կերպարանքով, իսկ էությամբ մնացել նույն բարբարոսը: Հենվելով տեղեկագրի տվյալների վրա, Ռաֆֆին չորս կետերում արտահայտում է արևմտահայերի դրությունը.

1. անապահովություն ապրուստի և սեփականության
2. անապահովություն կյանքի
3. անարդարություն դատաստանի մեջ և իրավունքի ոտնահարություն
4. անապահովություն ազգային առանձնահատկությունների:

Նա գտնում է, որ բարենորոգումների հարցը լուծված կարելի է համարել միայն այն դեպքում, երբ վերոհիշյալ չորս հարցերը լուծում ստանան:

Աշխատության մեջ Ռաֆֆին կանգ է առնում հայ ազատագրական պայքարի կենդանի արտահայտություններից մեկի՝ հայդուկային շարժման առաջացման պատճառների վրա և այդ առնչությամբ հայացք նետում հայ-քրդական հարաբերություններին: Նա նշում է, որ մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմը դրանք եղել են ջերմ, բարեկամական, մանավանդ Աբդուլ Սեջիդի և Աբդուլ Ազիզի քրդահալած քաղաքականությունից հետո, երբ քրդերը ատելությամբ լցվեցին թուրքերի հանդեպ և ավելի մտերմացան հայերի հետ: Սխալվում է, սակայն, Ռաֆֆին,

կարծելով, թե հայ-քրդական հարաբերությունների սառեցումը և ապա անգուսպ թշնամանքի վերածվելը սկսվեց այն օրից, երբ Անգլիան հղացավ քրդական անջատ-անջատ, շատ դեպքերում իրար թշնամի ցեղերից ստեղծել մի քրդական միություն, իբրև պատնեշ ռուսների ճանապարհին՝ դեպի Հնդկաստան: Այդ ձեռնտու էր նաև Թուրքիային, որը ծրագրված կերպով խորացնում էր քրդերի թշնամանքը հայերի նկատմամբ: Հայկական զինված խմբերի՝ հայդուկների գործունեությունը Ռաֆֆին բացատրում է քրդերի ասպատակություններից պաշտպանվելու անհրաժեշտությամբ ու ընդգծում, որ նրանք ամենևին թուրքական կառավարության դեմ ապստամբելու նպատակ չէին հետապնդում: «Թուրքաց հայերի այժմյան շարժումը,- գրում է նա, -իրական փաստ է: Նա դարավոր տխուր հալածանքների մի ազդու հետևանք է, նա պատմական անհրաժեշտությունների մի սոսկալի արտահայտություն է: Թուրքիան կարող է զսպել այդ շարժումը նրանով միայն, երբ կատարե հայերի իրավացի պահանջը: Բայց քանի որ հայկական խնդիրը մեռցնելու նպատակով Թուրքիան կաշխատե քրդական միություն հնարել, դրանով ավելի կբորբոքե հայերի արդար կատաղությունը»[1]:

Ընդգծելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի նշանակությունը միայն այնքանով, որքանով հայերը կրոնական համայնքից Եվրոպայի առջև ճանաչվեցին իբրև ազգ, Ռաֆֆին համեստորեն գրում է, որ պետք չէ հույսը դնել այդ հոդվածի վրա և Եվրոպայից փրկություն սպասել: «Ոչ թե Եվրոպան, այլ Աստված չի օգնի Թուրքիայի հայերին, եթե նրանք ինքները իրենց օգնելու մեջ ծույլ կլինեն...»[2],- ավելացնում է նա, զգուշացնելով, որ չնայած Թուրքիան խոստանում է Հայոց հարցը վճռել չորս ամսվա մեջ, բայց գուցե չորս ամսից հետո Հայաստանում հայ չմնա: Նա համոզմունք է հայտնում, որ թուրքահայը դպրոցի մեջ պիտի գտնի իր վերածնությունը և կոչ է անում ռուսահայերին՝ եղբայրակիցներին այդ նպատակով ցույց տալ նյութական եռանդագին օժանդակություն: Այսպիսով Ռաֆֆին «Տաճկահայքում» ուրվագծում է հայ ազատագրական շարժման երկու ուղիներ՝ զինված պայքար և լուսավորական լայն գործունեություն:

---

[1] Նշվ. աշխ., էջ 127:
[2] Նշվ. աշխ., էջ 144:

* * *

Ոգևորված 1908թ. երիտթուրքական հեղափոխության կարծեցյալ հեռանկարներից և այդ հեղափոխության մեջ տեսնելով հայ ժողովրդի վերածնունդը, պրոֆեսոր Սմբատ Գաբրիելյանը 1909 թվականին Բոստոնում հրատարակեց մի ծավալուն աշխատություն՝ «Հայկական ճգնաժամն ու վերածնություն» վերնագրով, որտեղ շոշափվում են XIX դարի 2-րդ կեսի հայ ազատագրական շարժման մի շարք հանգուցային հարցեր: Աշխատության մեջ պրոֆ. Ս.Գաբրիելյանը կրկնում և խորացնում է այն հակագիտական տեսակետը, ըստ որի, մինչև Հայկական հարցի միջազգային մասշտաբով արծարծումը հայ ազատագրական շարժում գոյություն չուներ, հետևաբար և օսմանյան կառավարությունն առիթ չուներ հայահալած քաղաքականություն վարելու:

«Հայրենասիրությունը լոկ բանաստեղծական էր: Կառավարությունը ալ իր հայ հպատակաց նկատմամբ թշնամական քաղաքականություն մը չուներ, և գյուղաբնակ հայության կրած հարստահարություններն զեղծ՝վարչության արդյունք էին լոկ»[1], - գրում է նա աշխատության առաջին՝ «ներկա հայ ճգնաժամին ծագումը» գլխում: Ցուցաբերելով կողմնակալ մոտեցում՝ Ս.Գաբրիելյանը հայկական ճգնաժամի առաջացման ամբողջ մեղքը բարդում է Ռուսաստանի վրա: Անտեսելով դեռ մինչև Սան Ստեֆանոն Թուրքիայում գոյություն ունեցող անտանելի իրականությունը, գավառական բիրտ հարստահարությունների անհամար փաստերը, նա հանգիստ խղճով գրում է, որ եթե Ռուսաստանը, ելնելով իր քաղաքական դիտավորություններից, չդրդեր պատրիարք Ն.Վարժապետյանին՝ Սան Ստեֆանո գնալ, հայերի կյանքի «խոստումնալից հոլովման ընթացքը» կշարունակվեր[2]: Պրոֆ. Ս.Գաբրիելյանի հակառուսական տրամադրությունը շեշտվում է մանավանդ այն ժամանակ, երբ նա գրում է, թե Անգլիան հայերի շահերի պաշտպանության համար մտադիր էր դիմել ռազմական միջամտության, բայց ձեռնպահ մնաց՝ իր դեմ տեսնելով Ռուսաստանին /էջ 145/:

[1] Ս.Գաբրիելյան, Հայկական ճգնաժամն ու վերածնություն, Բոստոն, 1909թ. էջ 18:
[2] Նշվ. աշխ., էջ 19, 21:

Պրոֆ. Ս.Գաբրիելյանը մեկն է այն թյուր տեսակետի ջատագովներից, որոնք թուրքահայ ազատագրական շարժումը համարում էին բացառապես կովկասահայերի գործը, պնդելով, որ թուրքահայի մտքովն անգամ նման բան չի անցել: Նրա խորին համոզմամբ զենքի դիմելու ամեն մի ձեռնարկ ոչ միայն սխալ է, այլ ուղղակի ինքնասպանություն: Ճգնելով հնարավորին չափ սեղմել հայ ազատագրական շարժման մասշտաբները նա գրում է. «... հայկական ոչ ապստամբություն եղած է և ոչ հեղափոխական շարժում: Այդպիսի անուններով հռչակված խլրտումները գործն եղած են 50 հոգիէ, հազիվ 100 հոգիէ բաղկացած անձերու, որոնք բուն տաճկահայ ալ չեն եղած, քիչ բացառությամբ, այլ ռուսահպատակ հայեր, Կովկասեն սպրդած ի Հայաստան: Վերջին 20 տարվան մեջ զենք առած ու հեղափոխական կռվի ասպարեզն իջած հայերու ամբողջ թիվը 300-ի չի հասնիր»[3]: Հայ ազատագրական շարժման առավել նսեմացում դժվար է պատկերացնել:

Անդրադառնալով Հայկական հարցի արծարծմանը Սան Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում՝ պրոֆ. Ս.Գաբրիելյանը 16-րդ հոդվածը որակում է որպես 90-ական թվականների հայկական սարսափների բուն պատճառ, իսկ 61-րդը՝ մի անօգուտ հոդված, որի պատճառով հայերը, ի դեմս Ռուսաստանի և Թուրքիայի, երկու ուժեղ թշնամիներ շահեցին:

Խորամուխ չլինելով արևմտյան պետությունների իսկական նպատակների պարզաբանման մեջ նա կարծում է, որ եթե դիվանագիտական գործունեության համար ոչ հարմար Մկրտիչ Խրիմյանի փոխարեն Վարժապետյանը Բեռլին ուղարկեր Պողոս Նուբար փաշային, որի ծրագիրն ավելի չափավոր պահանջներ էր առաջադրում, ապա վեհաժողովում հայերի հաջողությունն ապահովված կլիներ:

* * *

Հարցերին բոլորովին հակառակ տեսանկյունից է մոտենում պրոֆեսոր Կարապետ Թումայանը, որի տեսակետով «Սան Ստեֆանո ազատագրության մեծ դաշնագիր մըն է և անոր պա-

[3] Նշվ. աշխ., էջ 180:

տիվ Ռուսիո կմնա»[1], իսկ «Բեռլինի դաշինքը Սան-Ստեֆանոյի հետ նույնն է՝ քիչ փոփոխությամբ: Եթե տարբերություն մը կա, ան ալ ավելի ժլատ ըլլալն է: Բեռլին Ստեֆանոյի ընդարձակորեն գծած ազատությունը կսահմանափակե... Հայաստանը կթողու Թուրքիո կամքին, և այս ամենը շնորհիվ Անգլիո»[2]: Բաղդատելով, սակայն, երկու հոդվածները, պրոֆ. Թումայանն արտահայտում է հակասական, իրարամերժ մտքեր: Այսպես. բարենորոգումների իրագործումը եվրոպական պետությունների հավաքական հսկողության տակ դնելը «միայն Ռուսիո տակ դնելեն լավագույն է»[3] արտահայտությունից հետո Թումայանը գրում է, թե «քանզի հասարակաց պարտքը ոչ ոքի պարտքն է» և ապա ավելացնում՝ հայտնի չէ սակայն, որ եթե հայերը Ռուսիո թևարկությանն հանձնվեին, վիճակնին ավելի լավ կըլլար...»: 61-րդ հոդվածը ավելի որոշ համարելով 16-ից, նա անմիջապես ժխտում է իրեն, նշելով, որ հոդվածում ասված չէ, թե ինչպես պիտի հսկեն բարենորոգումների կատարմանը և ոչ էլ ասված է, թե պետություններն ինչ պիտի անեն, եթե Դուռը չիրագործի ռեֆորմները: Մի տեղ նա գրում է, թե Բեռլինի դաշինքը Սան Ստեֆանոյի հետ նույնն է՝ քիչ փոփոխությամբ, իսկ քիչ հետո ընդգծում, որ տարբերությունը միայն թվերի փոխվելու մեջ չէ, «մեջտեղնին մեծ տարբերություն կա»[4]: Հստակ կողմնորոշում, ինչպես նկատելի է, չկա:

Պրոֆ. Թումայանը չի կարողանում թափանցել բրիտանական նենգ դիվանագիտության մութ ծալքերը և իրադարձություններին տալիս է պարզունակ մեկնաբանություն: Ահա թե ինչու Թումայանի համար տարօրինակ է, թե ինչու Կիպրոսի դաշնագրում Անգլիան նույնիսկ «հայ» բառը չմտցրեց, չէ որ Հայաստանից առանձնաշնորհյալ գավառ կազմելը հիանալի միջոց էր ռուսական առաջխաղացման դեմ: Նա կարծում է, որ եթե Անգլիան չպնդեց բարենորոգումների վրա, երբ սուլթանն իր ձեռքում էր, ապա միակ պատճառն այն էր, որ թուրքերը կարողացան Սոլսբերիին խաբել այնպես, ինչպես Փարիզի հաշտության պայմանագրի կնքման ժամանակ. «Եթե լորդ Բիկոնսֆիլդ և լորդ Սոլսբերին ավելի շրջահայաց, թուրքական բարուց ավելի վարժ ըլլալով՝ երկաթը տաք-տաք եղած ժամանակ ծեծեին, առանց թող տալու, որ Դուռը հինցնէ ու մոռցնէ, կարելի է բան մը ըլլար»[5] միամտորեն և ափսոսանքով բացականչում է նա: Քաղաքական իրադրությունը հստակ չպատկերացնելու արգասիք է նաև պրոֆ. Թումայանի այն պնդումը, թե իբր բարենորոգումների խնդրի լուծումից Անգլիան հուսահատվեց և ասպարեզից քաշվեց, որովհետև անհրաժեշտ աջակցություն չգտավ Գերմանիայի և Ռուսաստանի կողմից:

Պրոֆ. Կ.Թումայանի աշխատության մի զգալի մասը նվիրված է 90-ական թվականների իրադարձություններին, որտեղ նա ցուցաբերում է ընդգծված անգլիասիրություն: Նա գտնում է, որ այդ ժամանակաշրջանում միայն Անգլիան էր, որ անկեղծորեն ցանկանում էր օգնել հայերին, սակայն մյուս տերություններից աջակցություն չէր գտնում: Նրա կարծիքով ջարդերը տեղի ունեցան ոչ թե նրա համար, որ Եվրոպան միջամտեց Հայկական հարցին, այլ նրա համար, որ զորավոր կերպով չմիջամտեց:

90-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումը պրոֆ. Կ.Թումայանի պատկերացմամբ երկանիվ կառք է, որոնցից մեկը Եվրոպան է, իսկ մյուսը ինքը՝ հայ ժողովուրդը: «Հայկական կառքը մեկ անիվով չի քալեր, պետք էր, որ ազգային զանգվածն ալ շարժման մեջ դրվեր: Այդ պաշտոնն ալ կատարեց Հայ Հեղափոխական Շարժումը»,- գրում է նա[6]: Նշենք, որ այս հարցում ևս Կ.Թումայանը հակասական է: Աշխատության սկզբում նա օտոմանյան բանկի գրավումը որակում է որպես հիմարություն, իսկ վերջում ջերմ համակրանքով է խոսում թե հնչակյանների, թե դաշնակցականների գործունեության մասին, գտնելով, որ այդ գործունեությունը Հայկական հարցի լուծման միակ հնարավոր և բնական ուղին էր: Աշխատության վերջում Կ.Թումայանը փորձում է տեսնել ինչ-որ օգուտներ, որոնք հայերն ստացան ջարդերի հետևանքով: Դրանք են՝ Անգլիայի համակրանքը շահելը, Հայկական հարցը ըստ արժանվույն Եվրոպայում ճանաչվելը, հայ գրականության զարգանալը, հայերի

[1] Կ.Թումայան, Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905, հ. 1, էջ 517:
[2] Նշվ. աշխ., էջ 522:
[3] Նշվ. աշխ., էջ 524:
[4] Նշվ. աշխ., էջ 531:

[5] Նշվ. աշխ., էջ 542:
[6] Նշվ. աշխ., էջ 600:

մեջ հայրենասիրության և ինքնապաշտպանության գաղափարի բորբոքվելը, անձնվեր զինվորների երևան գալը և արտասահմանյան հայկական կենտրոնների հաստատվելը:

* * *

XIX դարի կեսի արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն երևույթներին վերաբերող ուշագրավ դիտողություններ կան Գագիկ Օզանյանի «Հայապատում: Հայուն պատմական դերը» աշխատությունում»[1]:

Գ.Օզանյանը Սահմանադրության մեծագույն արժանիքը համարում է այն, որ «Սահմանադրական ոգին հեղափոխական ոգին երկնեց և ազգային հարցը սեղանի վրա դրավ...»[2]:

Գ.Օզանյանը Հայկական հարցը դիտում է իբրև Արևելյան հարցի մի երես և նրա սկզբնավորումը նախքան միջազգային կարևորություն ստանալը հասցնում մինչև Իսրայել Օրի, որին անվանում է Հայկական հարցի առաջին վարագույրը բացող: XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումների գլխավոր պատճառները ըստ Գ.Օզանյանի, հետևյալն են. կյանքի, պատվի և ինչքի անապահովությունը, կրոնական անհանդուրժողականությունը, տնտեսական հալածանքը, վարչական հոռի համակարգը, աղաների և բեկերի շահատակությունները, ընդունակությունների և ազգային կենսունակության չարաչար սպանումը, քաղաքացիական իրավունքների բռնաբարությունը: Դրան նա ավելացնում է մի շարք զորավոր ազդակներ, որոնք են՝ եվրոպական նոր մտքերի հոսանքը Թուրքիա, Ազգային սահմանադրությունը, հայ կյանքի իմացական վերազարթնումը և հայոց արևելյան ու արևմտյան աշխարհիկ գրականությունները, ռուսահայ նոր մտքերը, ազգային վիպասաններն ու երգիչները, ազատագրված ազգերի օրինակը և օտար միջամտության հավատքը:

Գ.Օզանյանը հայ ազատագրական շարժումը համարում է միանգամայն օրինաչափ, պատմականորեն անհրաժեշտ երևույթ, գրելով. «Հայ միտքին ընդհանուր զարթնումն ու գիտակցությունը անհրաժեշտորեն հայ ժողովուրդը պիտի դներ

[1] Նշվ. աշխ.. էջ 193:
[2] Գ.Օզանյան, Հայապատում: Հայուն պատմական դերը, Մարզվան, 1912:

հեղափոխական այն ճամբուն վրա, ուրկէ անցեր էին Թուրքիոհորիզոնեն հեռացող բոլոր ստրուկ ազգեր: Պերլինի վեհաժողովեն վերջ միևնույն արյունի ճանապարհն էր, որ կբացվեր այս ժողովուրդին ալ առջև»[3]:

Աշխատության մեջ Գ.Օզանյանը կանգ է առնում հայ քաղաքական կուսակցությունների առաջացման, նրանց գործունեության հիմնական օղակների վրա և գնահատում դրանք: Ընդհանուր առմամբ գնահատելի համարելով արմենականների գործունեությունը, Գ.Օզանյանը նշում է, որ նրանք ամբողջական քաղաքական ծրագիր չունեին, գործունեության ոլորտը սահմանափակ էր: Մինչդեռ հնչակյան կուսակցության հանդես գալը, իր քաղաքական ու տնտեսական պահանջները առաջադրող ծրագրով, Գ.Օզանյանի տեսանկյունով նոր թվական էր բացում Հայկական հարցի ընթացքի մեջ, իսկ «Գում-Գաբուի ցույցը այն մեծ հանգրվանն էր, որուն սեմին առջև հայ ժողովուրդը սարսռաց պահ մը ու ապա՝ ոտք նետեց դեպի արյունի ճանապարհը»[4]: Օզանյանի վերաբերմունքը Հ.Հ. Դաշնակցության նկատմամբ որոշակի չէ: Նշվում է, միայն, որ Օտտոմանյան բանկի գրավման առթիվ միայն Պոլսում 10 000 հայ կոտորվեց:

* * *

Հայ ազատագրական շարժման կարևորագույն փուլերից մեկն էլ 1880-ական թվականներն են: Այս այն շրջանն է, երբ հիասթափված եվրոպական պետություններից, հայությունն իրեն գտավ օսմանյան բիրտ պետականությանը դեմ հանդիման, որը պատրաստ էր առիթը բաց չթողնել՝ վերջնականապես ճզմելու կայսրությանն այնքան անհանգստություն պատճառած տարրը: Ինքնապաշտպանական գործի շուտափույթ կազմակերպումը դարձել էր հրամայական պահանջ: Դրա լավագույն միջոցը գաղտնի խմբակների ու կազմակերպությունների ստեղծումն էր, որին և ձեռնամուխ են լինում ժամանակի հայ ազատագրական շարժման գործիչները: Հիշյալ գաղտնի կազմակերպություններին նախախորհրդային շրջանի հայ պատմագրությունը գրեթե չի անդրադարձել: Կար-

[3] Նշվ. աշխ., էջ 225:
[4] Նշվ. աշխ., էջ 236:

ծում ենք, որ դրա պատճառը նախ և առաջ այդ կազմակերպությունների գաղտնի լինելն էր: Ճիշտ է, դրանցից ոմանք քողարկվելու նպատակով ունեին զանազան անուններ և առերևույթ հանդես էին գալիս իբրև լեգալ ընկերություններ, սակայն այդ շրջանակներում նրանց գործունեությունը պատմագրության համար հետաքրքրություն չէր կարող ներկայացնել: Անշուշտ, լռություն պահպանելու գործում որոշակի դեր կարող են կատարած լինել նաև քաղաքական նկատառումները: Հայտնի է, որ գաղտնի խմբակների գործունեությունը նսեմացնելու, դրանց որպես անհատ մարդկանց նեղ դավադրություն ներկայացնելու ընթացք վերցրեց նաև թուրքական կառավարությունը՝ նորից ելնելով քաղաքական որոշակի նկատառումներից:

80-ական թվականների հայ ազատագրական շարժման մեջ ամենանշանակալից երևույթը Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունն էր: Սակայն, այս խոշոր կազմակերպության մասին ևս մինչխորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ չի ստեղծվել որևէ փոքրիկ ուսումնասիրություն:Այս տեսակետից խիստ բարձրանում է կազմակերպության ակտիվ ղեկավարներից մեկի՝ Կարապետ Նշկյանի եղբոր՝ Հակոբ Նշկյանի հուշագրության արժեքը[1], որը լույս է տեսել 1906 թվականին և վերահրատարակվել 1930-ին՝ Ֆրեզնոյում: Հարություն Նշկյանը ինքն էլ մասնակից է եղել կազմակերպությանը, և եթե հավատալու լինենք իրեն /դժբախտաբար այդ բանը իրենից բացի ուրիշ ոչ ոք չի վկայում/, եղել է կազմակերպության 6 հիմնադիր անդամների՝ Խաչատուր Կերեկցյան, Կարապետ Նշկյան, Հակոբ Իշգալացյան, Հովհաննես Աստուրյան, Եղիշե Տուրսունյան, Ալեքսան Էթալիկյան, կազմում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հ.Նշկյանի աշխատությունը փաստական մեծաքանակ նյութ է պարունակում և գալիս է լրացնելու արխիվային փաստաթղթերի հաղորդած տեղեկությունները: Հ.Նշկյանը տեղեկացնում է, թե որն էր «Պաշտպան Հայրենյաց»-ի բուն նպատակը. «Ընկերութեան նպատակն էր զինել վստահելի և կարող անձեր, մասնավորապես գյուղերու մեջ, որպեսզի կարող ըլլան պաշտպանել իրենք-զիրենք քիւրտերու կամ թիւրքերու յարձակումներուն

[1] Հ.Մ.Նշկյան, Առաջին կայծերը /էջ մը Կարնո զարթոնքեն/, Ֆրեզնո, 1930թ.:

դեմ»[2]: Հուշագրողը, սակայն, շատ է նեղացրել կազմակերպության գործունեության շրջանակը՝ վերագրելով նրան միայն ինքնապաշտպանական ֆունկցիա: Ինչպես արխիվային փաստաթղթերի հիման վրա հետագայում ցույց տվեցին խորհրդահայ պատմաբանները, ընկերությունը ոչ թե սոսկ ավազակախմբերի դեմ ինքնապաշտպանություն կազմակերպող մարմին էր, այլ քաղաքական մի կազմակերպություն, որն իր առաջ խնդիր էր դնում ազգային-ազատագրական պայքար մղել թուրքական բռնակալության դեմ: Հենց թեկուզ այդ փաստը կարող է վկայել, որ Հ.Նշկյանը քաջատեղյակ չէր կազմակերպության գործերին: Նա հետաքրքիր փաստեր է հաղորդում կազմակերպության կառուցվածքի մասին՝ տեղեկացնելով, որ մշակված էր տասնապետական համակարգ: Յուրաքանչյուր տասնյակ ճանաչում էր միայն իր տասնապետին: Նրանցից յուրաքանչյուրը կարող էր նոր տասնյակ հավաքագրել, որոնք չպիտի ճանաչեին իր տասնյակի անդամներին: Անդամները ոչ մի հարաբերություն չպիտի ունենային և նույնիսկ չպիտի էլ ճանաչեին հիմնադիր անդամներին:

Այնուհետև Հ.Նշկյանը խոսում է զենք հայթայթելու դժվարությունների մասին, վկայում, որ այդ նպատակով Խ.Կերեկցյանը մեկնել է Վան՝ տեսակցելու Խրիմյան Հայրիկի հետ, իսկ Կ.Նշկյանը մեկնել է Պոլիս՝ հանդիպելու Ն.Վարժապետյանին: Պատրիարքը իր գոհունակությունն ու ուրախությունն է հայտնել, խոստացել աջակցել: Այնուհետև Կերեկցյանն անցել է Թիֆլիս, ստացել Գ.Արծրունու քաջալերանքը, սակայն նյութական օգնություն չի կարողացել ձեռք բերել:

Ռուսաստան է անցել նաև Կ.Նշկյանը՝ դրամ հայթայթելու, զենք փոխադրելու, ինչպես նաև ռուսահայերի տրամադրությունները պարզելու նպատակով: Երկու ամիս հետո նա նույնպես վերադարձել է բարոյապես քաջալերված, բայց ձեռնունայն:

Հ.Նշկյանը վկայում է Խ.Կերեկցյանի մի հանդուգն առաջարկի մասին՝ զինված հարձակումով գիշերը գրավել կառավարական զինապահեստը, որը մերժվել է և դրա փոխարեն որոշվել Կովկաս ուղարկել Կ.Նշկյանին: Հետաքրքրական է Կ.Նշկյանի հան-

[2] Նշվ. աշխ., էջ 117:

դիպման նկարագրությունը Գր.Արծրունու հետ:Եթե հավատալու լինենք Հ.Նշկյանին, կստացվի, որ Արծրունին այն Արծրունին չէ, որն ուներ ընդգծված ռուսական կողմնորոշում և անդադրում կոչ էր անում զենքի դիմել ու ազատագրվել թուրքական լծից: Ընդունելով Կ.Նշկյանին, Արծրունին ասում է. «Ուրախ եմ, որ գլխարկդ չես փոխել, իրավ ֆեսը հաճելի գլխարկ չէ, բայց ես դրան նախապատիվ եմ համարում շլյապայից, ինչպես թուրքերը՝ ռուսներից և տաճկահայերը ռուսահայերից»[1]: Իսկ երբ Նշկյանը հարցնում է, թե արդյոք հարմար չէ հիմա, երբ թուրքերը ջարդված են, զենքի դիմել, Արծրունին պատասխանում է. «Ախ երիտասարդներ, ինչու այդքան արագ վազում եք ու շնչասպառ ընկնում ճամբուն... Թուրքը որքան ջախջախված լինի՝ երկու օրվան գործ է հայուն ջնջելը...»[2]:Արծրունին խորհուրդ է տալիս անհապաղ ոչնչացնել բոլոր երդմնագրերը, որոնք տպվել և բաժանվել են կազմակերպության անդամներին: Այդ երդմնագրի վիմագրությունը կատարել էր ռուսահայ վտարանդի Միքայել Մանուկյանը: Երդմնագրի վերևում պատկերված էին երկու խաչաձևված սրեր, իրար գրկած երկու ձեռքեր, գագաթին գրված՝ «Պաշտպան հայրենյաց»: Ներքևում տպված էր երդման տեքստը, որը վերջանում էր «Ազատություն կամ մահ» կոչով:

Ի միջի այլոց, երդմնագրերից հրաժարվելու խորհուրդ էր տվել նաև Ն.Վարժապետյանը՝ քողարկման նպատակով:

Հ.Նշկյանի ասելով, դեռ իր ժամանակին նույն բանն էր պահանջել նաև ինքը: Հ.Նշկյանը վերապատմում է մատնության մանրամասները: Կարինցի քահանա տեր Մելքիսեդեկը, որը վատ վարքի տեր էր և հակառակորդներ շատ ուներ, վաստակել էր նաև կազմակերպության անդամ Էիրամճի Պալասի թշնամանքը: Վերջինս միակ անդամն էր, որ դեռևս չէր հանձնել իր մոտ եղած երդմնագրերը, որոնք պատրիարքի հրամանով հավաքվել և այրվել էին: Երբ Պալասը ձգձգում է երդմնագրերի հանձնումը, այդ գործով զբաղվող Ղալայաճի Գալուստը որոշում է արբեցնել նրան և վերցնել երդմնագրերը: Վերադարձի ճանապարհին, անցնելով քահանայի տան մոտով, գինովցած Պալասը խուժում է քահանայի տուն, հայհոյում ու սպառնում նրա ընտանիքի անդամներին: Քահանայի որդու պահանջով Պալասը ձերբակալվում է: Ոստիկանական գործակալ Պողոս Սարաֆյանը, որը Պալասի մոտիկ ընկերոջ՝ Մկրտիչ Աղադալյանի միջոցով տեղյակ էր նրա՝ ինչ-որ գաղտնի կազմակերպության պատկանելու մասին, հայտնում է ոստիկանությանը: Չդիմանալով խոշտանգումներին, Պալասը տալիս է իր մոտ եղած երդմնագրերը և իր ճանաչած անդամների անունները, որոնց թվում նաև փորագրիչ Միքայել Մանուկյանինը: Սա էլ իր հերթին մատնում է 70 մարդու: Սկսվում են զանգվածային ձերբակալությունները: Տպավորությունն այնքան մեծ էր, որ սարսափում է նույնիսկ սուլթանը: Ըստ Նշկյանի, այդ էր հիմնական պատճառը, որ, Համիդը հանկարծակի իր մոտ է հրավիրում հրաժարական տված Ներսես պատրիարքին, մի գեղեցիկ առանձնատուն նվիրում նրան և առաջարկում կրկին ստանձնել պատրիարքությունը: Նշկյանի ասելով՝ սուլթանը մտածում էր, որ «Ներսեսը սիրաշահելով պիտի կրնայ առաջն առնել մեծ հեղափոխութեան մը»[3]: Ուշագրավ է, որ Նշկյանի վկայությամբ, ձերբակալություններն ու խուզարկությունները չեն ուղեկցվել բռնություններով: Բայց երբ սուլթանի համար պարզ է դառնում, որ սպառնացող վտանգը սպասածի չափ մեծ չէ և լուրերն էլ խիստ չափազանցված են, կտրուկ շրջադարձ է կատարում իր վերաբերմունքի մեջ Ներսեսի հանդեպ, նրան արժանացնելով սառն արհամարհանքի: Մինչդեռ պոլսահայերն ուրախացել էին, կարծելով, թե Համիդը որոշել է բարենորոգումների ծրագիրն իրականացնել:

Նշկյանը վկայում է, որ մինչև կազմակերպության հայտնաբերվելը թուրքական կառավարությունն արդեն ուներ որոշ կասկածներ: Նա հայտնում է, որ ոմն Գ.Ա. [4]ժամանելով Կարին, իբր ցանկանում է հայրենասիրական կազմակերպություն հիմնել, նույնիսկ հրավիրում է գաղտնի ժողով, բայց հետո պարզվում է, որ նրա նպատակը ոչ թե կազմակերպության հիմնելն է, այլ իմանալը՝ գոյություն ունի այդպիսին, թե ոչ: Անտարակույս հայազգի այդ դավաճանը թուրքական գործակալ էր:

[1] Նշվ. աշխ., էջ 56:
[2] Նշվ. աշխ., էջ 57:

[3] Նշվ. աշխ., էջ 133:
[4] Ռ.Փ.Հովհաննիսյանը պարզել է, որ դա Գևորգ Ազնաուրն էր, /Տես Ռ.Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 286:

«Պաշտպան Հայրենյացի» պատմությանը նվիրված մի արժեքավոր հոդվածով 1917թ. մարտին հանդես եկավ Սարուխանը[1]:

Հոդվածի սկզբում սեղմ, բայց բնորոշ գծերով Սարուխանը ներկայացնում է Բեռլինի դաշնագրից հետո ստեղծված քաղաքական հանգամանքները, համոզիչ կերպով ցույց տալիս, որ բարենորոգումներ ձեռնարկելու փոխարեն Թուրքիայի պաշտոնական շրջանները նախապատրաստում էին արևմտահայության բնաջնջման ծրագիրը: Կարինի կազմակերպության հանդես գալը պայմանավորելով վերոհիշյալ քաղաքական պարագաներով, մեր կարծիքով, սխալվում է հոդվածագիրը՝ նրա նպատակը սոսկ ինքնապաշտպանությամբ սահմանափակելով: Նա հայտնում է այն միտքը, որ եթե Մկրտիչ Խրիմյանը հրաժարվեց ընկերությանը համագործակցելուց, ապա Կարնո հոգևոր առաջնորդ Մաղաքիա Օրմանյանը ընկերության վարչության չորս անդամներին՝ Խաչատուր Կերեկցյան, Հովհաննես Աստուրյան, Կարապետ Նշկյան, Հակոբ Իշղալացյան, խոստացավ իր աջակցությունը և նրանց հետ գաղտնի հարաբերությունների մեջ մտավ իր փոքրավոր Մարուքեի միջոցով՝ օգնելով նրանց իր խորհուրդներով, հրահանգներով ու կարևոր տեղեկություններով:

Հետաքրքրական է, որ Սարուխանը ոչ մի տեղ կազմակերպությանը «Պաշտպան Հայրենյաց» անունը չի տալիս, այլ այն կոչում է «Երկրագործական ընկերություն», որը հիմնվել էր Կարինի «Բարձր Հայոց ընկերություն» կրթական լեգալ կազմակերպության արգելումից հետո: Ըստ նրա տված տեղեկության՝ «Պաշտպան Հայրենյաց» մակագրությունը կրում էին լոկ ընկերության անդամատոմսերը:

Տալով ընկերության կազմակերպական կառուցվածքի նկարագիրը Սարուխանը վկայում է, որ այն կամաց-կամաց ընդլայնում էր իր շրջանակները՝ հիմնադրումից վեց ամիս հետո ընդգրկելով շուրջ 300 անդամներ, և ծրագրվում էր գաղտնի ճյուղեր տարածել նաև հայաբնակ այլ քաղաքներում, սակայն շուտով, մի աննշան դեպքի պատճառով, որի մասին խոսվեց վերևում, կազմակերպությունը հայտնաբերվեց և շուրջ 76 հոգի ձերբակալվեցին: Ձերբակալվածների ցուցակի հիման վրա Սարուխանը եզրակացնում է, որ նրա անդամների ճնշող մեծամասնությունը երկրագործներ ու արհեստավորներ էին: Հատկանշական է, որ ոստիկանությունը սկզբում կասկածանքի տակ վերցրեց նաև Մ.Օրմանյանին, լրտեսական հերթապահություն սահմանելով նրա տան մոտ, սակայն, ինչպես նշում է հոդվածագիրը, որևէ փաստ չկարողացավ հայտնաբերել:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում Սարուխանի հոդվածի երրորդ՝ «Դատավարությունը» բաժինը, որը շարադրված է դատարանի մեղադրական եզրակացության թուրքերեն բնագրի հիման վրա և որից հոդվածագիրը կատարել է ընդարձակ մեջբերումներ: Մեղադրական այդ եզրակացության մեջ նշվում է, որ «Ձերբակալված 56 թուրքահպատակ և 1 ռուսահպատակ հայերը մեղադրվում են, որ նրանք էրզրում քաղաքը և շրջակայքը Թուրքիայի տիրապետությունից հանելու նպատակով հեղափոխություն են կազմակերպել և այդ նպատակն իրագործելու համար վնասակար գործերի ձեռնամուխ են եղել...»[2]:

Առաջնորդվելով գործող քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածով և նրա հավելվածով՝ թուրքական դատարանը մեղադրյալներին դատապարտեց 5-15 տարվա տարբեր պատժաչափերի վճռաբեկ գանգատի համար տալով ընդամենը հինգ օր ժամանակ:

Մեծ արժեք են ներկայացնում դատապարտյալների բողոքագրի բնագրից կատարված համապատասխան մեջբերումները, ըստ որի մեղադրյալները նաև բողոքում էին դատարանի կազմի ապօրինի լինելու դեմ: Նիստին մասնակցել էր ոչ թե դատարանի բուն անդամը, այլ փոխանդամը, այն դեպքում, երբ առաջինը գտնվում էր քաղաքում: Քննիչը հետագայում մասնակցել էր նիստին իբրև դատարանի անդամ, մի բան, որը չէր կարելի: Հապշտապ կազմված ամբաստանագրերի պատճենները դատապաշտպաններին տալու համար դատարանի վարչությունը պահանջել էր ահռելի գումար՝ մի քանի հարյուր ոսկի, քաջ իմանալով, որ բանտարկված աղքատ արհեստավորները ի վիճակի չեն այդչափ գումար վճարելու: Բացի այդ, բանտում դատապաշտպանների այցելության միջոցին թուրքերենին անվարժ դատապարտյալներին չէր թույլատրվել բացատրվել հայերենով:

[1] Ա.Սարուխան, Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում «Գործ», Բաքու, 1917, հ..3:

[2] Նույն տեղում:

Ինչ վերաբերում է հայտնաբերված զինանշանակիր թղթերին, բողոքագիրները պնդում էին, թե այդ պատկերն իրենք վերցրել են Պոլսում հրատարակված պաշտոնական մի օրացույցից, իսկ հրացանավոր զինվորի և ամրոցի պատկերներն արտանկարված են լուցկու տուփերից, որոնք «մատիտով գծված երեխայական նկարներ են»: Թղթերի բովանդակության կապակցությամբ նրանք պահանջում էին լավ թարգմանել դրանք և համոզվել, որ այնտեղ խոսք անգամ չկա ժողովուրդն ապստամբեցնելու և Թուրքիայի որևէ մասը անջատելու մասին: Բողոքագրի վերջում մեղադրյալները հավաստում էին իրենց լիակատար հավատարմությունը, խնդրում բեկանել Կարինի դատարանի վճիռը և իրենց արդարացնել:

Հիմնավո՞ր էին, արդյոք, բողոքագրի վերոհիշյալ պատճառաբանությունները, ինչպես աներկմտորեն կարծում է Սարուխանը: Մեր կարծիքով՝ ոչ ամբողջովին: Հիմնավորված կարելի է համարել թերևս միայն բողոքարկողների գանգատը դատաքննչական ընթացակարգ խախտումների դեմ, իսկ ինչ վերաբերում է բուն մեղադրանքի հերքմանը, ապա այն բացահայտորեն անհամոզեցուցիչ է: Անշուշտ, փաստացի բավարար հիմքեր ուներ թուրքական դատարանը՝ վերը բերված մեղադրական եզրակացությանը հանգելու համար:

Պատժաչափերի հետագա մեղմացումը և ապա բոլոր բանտարկյալների ազատ արձակումը, որը տեղի ունեցավ պատրիարք Ներսես Վարժապետյանի ու Մաղաքիա Օրմանյանի անդուլ ջանքերի շնորհիվ, Սարուխանը բացատրում է ոչ թե նրանով, որ իշխանությունները համոզվեցին կազմակերպության աննշանակ լինելու մեջ, այլ միջազգային-քաղաքական որոշակի նկատառումներով թուրքական կառավարության՝ հայերին ժամանակավորապես սիրաշահելու քաղաքականությամբ:

Իր հոդվածը Սարուխանն ավարտում է ոչ ճիշտ մի եզրակացությամբ, թե ազատագրական հետագա շարժումների և գոյություն առած գաղտնի կազմակերպությունների մեջ ղեկավարի դերն այլևս տեղական ժողովրդին չէր պատկանում:

* * *

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1895-ի Գումգաբուի հնչակյան ցույցի գլխավոր դերակատարի՝ Հարություն Ճանկյուլյանի /Կայծիկ/ «Հիշատակներ հայկական ճգնաժամեն»[1] ընդարձակ հուշագրությունը՝ գրված բացառապես անձնական հիշողությունների հիման վրա: Աշխատությունն ավելի շատ ինքնակենսագրական է, քան ուսումնասիրություն: Պատմագիտական տեսակետից, սակայն, չափազանց արժեքավոր են այն տեղեկությունները, որպիսիք հուշագրողը հաղորդում է Վանի «Սև խաչ» գաղտնի կազմակերպության գործունեության մասին: Նկատենք, որ այդ կազմակերպության վերաբերյալ Հ. Ճանկյուլյանի աշխատությունը պատմագիտական առաջին աղբյուրն է:

Ըստ Հ.Ճանկյուլյանի տվյալների՝ 80-ական թվականների սկզբներին ազատագրական զարթոնքի շրջանում վանեցի մի խումբ խանդավառված երիտասարդներ հիմնում են «Սև խաչ» անունով գաղտնի մի կազմակերպություն, որ նշանակում էր՝ կազմակերպության դավաճան և անգաղտնապահ ընկերի անվան վրա սև խաչ քաշելով, իսկույն նեթ մահվան դատապարտել»[2]:

Կազմակերպության նպատակն էր, ինչպես ընդգծում է հեղինակը, ժողովրդի մեջ ինքնապաշտպանության ոգի տարածել և իր մարդկային իրավունքների տերը դարձնել: Նա վկայում է, որ կազմակերպությունն ունեցել է իր ակումբը, որտեղ շաբաթը մի քանի անգամ տեղի են ունեցել բանախոսություններ, երգվել հայկական ազատության երգեր: Ակումբի ճարտար բանախոսներից Հ.Ճանկյուլյանը հիշատակում է Տաճատ Պեյլերյանին, որն իր հմուտ բանախոսություններով դյուրում էր Վանա երիտասարդությանը, իշխում նրանց մտքերի վրա:

«Սև խաչին» աջակցում, նույնիսկ բանախոսություններին հաճախակի ներկա էր գտնվում Վանի հայազգի ռուսական հյուպատոս, հետագայում գեներալ Կոստանդին Կամսարականը:

Ինքնակենսագրողի վկայությամբ բանախոսությունների ընդհատման պատճառ է դառնում ոչ անհայտ Մկրտիչ Փորթուգալ-

[1] Հ.Ճանկյուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ.Պոլիս, 1913:
[2] Նշվ. աշխ., էջ 50:

յանը՝ իր ցուցամոլ ու անխոհեմ քայլով: Վերջինս Հայկազյան դպրոցում իր տալիք «Ժամանակը հասել է, հայեր, ինչ անենք» թեմայով բանախոսության ազդագիրը փակցրել էր շուկայի պատին: Երբ դատախազ Ռահիֆ բեյը գրագիր Նշան Քանքարճյանի հետ շրջում էր շուկայում, վերջինս նկատում և դատախազի համար թարգմանում է ազդագիրը: Բանախոսություններն անմիջապես արգելվում են: «Սև խաչը» որոշում է տեռորի ենթարկել մատնիչ գրագրին, սակայն հետագայում, հաշվի առնելով անկեղծ զղջումը, ներում են նրան:

Ինքնապաշտպանության պրոպագանդա անելու համար «Սև խաչի» գործակալները մեկնում էին հայկական հեռավոր գյուղերը, բռնագրավում ազատագրական շարժմանը դավաճանող հայ հոգևորականների ու մեծահարուստների թաքցրած գանձերը, թուրք զինվորներից գնում ու ամբարում զինապահեստներից գողացած հրացաններն ու փամփուշտները: «Սև խաչի» այսօրինակ գործողությունների մասին գիրքը պարունակում է հետաքրքրական մանրամասներ: Կազմակերպության նախաձեռնությամբ 1882 թվականին Վարագ վանքի բակում անցկացվում է արևմտահայերի Ազգային սահմանադրության 22-րդ տարեդարձի ճոխ տոնակատարություն: Տոնական շարասյունը գլխավորում էին նախօրոք կարված զինվորական համազգեստներով 80 հայ երիտասարդներ:

Չափազանց ուշագրավ է, որ Հ.Ճանկյուլյանը ակնարկում է «Սև խաչի» և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության առնչությունների մասին: Նա ափսոսանքով հայտնում է, որ տեղեկանալով Կարինում կանոնավորապես գործող կազմակերպության մասին, «Սև խաչն» անմիջապես կապվեց նրա հետ, սակայն դա երկար չտևեց, որովհետև շուտով մատնության գույժը Վան հասավ: Հ.Ճանկյուլյանը վկայում է, որ դրանք առանձին-առանձին կազմակերպություններ էին, նախապես միմյանցից անտեղյակ:

«Սև խաչի» ժողովներից մեկում որոշվում է փնտրել ու գտնել Վանից դուրս գործող մի զորեղ կազմակերպություն ու անցնել նրա ղեկավարության տակ: Վանեցիների հայացքը սևեռված էր դեպի Կ.Պոլիս, որտեղ, սակայն, բաղձալի կազմակերպությունը չէր հայտնաբերվում:

«Սև խաչի» գործերին տեղյակ էր նաև Մ.Խրիմյանը, որը հավանություն է տալիս Հ.Ճանկյուլյանի՝ Վան ժամանած Գրիգոր Սեբաստացու /Անպարճյան/ միջոցով Կ.Պոլսի հետ կապվելու գաղափարին՝ ճանապարհելով նրան հետևյալ խոսքերով. «Ուրեմն Վանա Սև Խաչը, այսօր Խաչի տոն ըլլալով, կը հասնի իր նպատակին, գնա, աշխատե շուտ գտնելու և Վան գրելու»[1]:

Փաստագրական արժեք ունի նաև Հ.Ճանկյուլյանի աշխատության՝ Գում-Գաբուի ցույցի նախապատրաստման ու ընթացքի նկարագրությունը:

* * *

Ամբողջ XIX դարի հայ ազատագրական շարժումների վերաբերյալ հետադիմական պատմագրության մոտեցումը մարմնավորել է Եղիշե քահանա Գեղամյանցի «Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում»[2] բազմահատոր աշխատության մեջ, որի 5-րդ և 6-րդ հատորյակներն ընդգրկում են մեզ հետաքրքրող ժամանակահատվածը: Հենց սկզբից ասենք, որ ազատագրական շարժումների և Հայկական հարցի տարբեր փուլերի վերաբերյալ Ե.Գեղամյանցի պարբերականացումը ճիշտ չէ, որը բխում է այդ երկու հասկացությունների նույնացումից. դրա ապացույցն են հատորների վերնագրերը: Եթե այդպես է, ուրեմն ինչու Հայկական հարցի առաջին շրջան համարել XIX դարի սկզբները, չէ որ հայ ազատագրական շարժում կար նաև նախորդ դարերում: Ի դեպ, Լեոն հենց այդպես էլ վարվում է: Ընդունելով հանդերձ, որ ժամանակակից հասկացողությամբ «Հայկական հարցը» թուրքահայերի ազատագրության հարցն է, նա միաժամանակ նշում է, որ «Հայոց հարցը» անհամեմատ հին է, անհամեմատ չարաբախտ: Դա մեր ազգի ազատագրական տենչանքն է, սկսած այն օրից, երբ կորցնելով իր քաղաքական անկախությունը, նա ընդունեց քրիստոնեություն և դրանով մտավ արևմտյան կուլտուրական ազգերի շարքը, ընդմիշտ կտրվելով իր ասիական անցյալից»[3]: Իսկ մեկ այլ տեղ Լեոն ավելի առաջ է գնում, գրելով՝ «Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը հայ

[1] Նշվ. աշխ., էջ 109:
[2] Ե.Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բաքու, 1915:
[3] Լեո, Հայոց հարցը, Թիֆլիս, 1906, հ. 1, էջ 7:

ազգը... Հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է սկզբից մինչև մեր օրերը»[1]: Լեոն էական տարբերություններ չի տեսնում ազատագրական շարժման բնույթի մեջ՝ սկսած 5-րդ դարից մինչև XIX դարի վերջը, տեսակետ, որն, անշուշտ, ընդունելի չէ:

Հ.Գեղամյանցի պարբերականացման հիմքում ընկած է այս կամ այն փաստաթուղթը, կամ որևէ դիվանագիտական ակտ: Այսպես՝ եթե 5-րդ շրջանը փակվում է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով, ապա 6-րդը սկսվում է հայկական պատվիրակության՝ տերություններին ներկայացրած բողոքագրով: Ազատագրական շարժման պատմության նման պարբերացումը խոտելի է: Այդ նույն սկզբունքով է առաջնորդվել նաև անվանի հայագետ Հրաչյա Աճառյանը, որը խնդրո առարկա պատմաշրջանի հայ ազատագրական շարժումը ներկայացրել է յոթ շրջանով[2]: Սխալվում էր, անշուշտ, մեծահամբավ հայագետը, կարծելով, թե 90-ական թվականներին Ռուսաստանի վարած արտաքին քաղաքականությունը բացարձակապես հակառակ էր հայերի ձգտումներին, թե Գերմանիան շահ չուներ Հայկական հարցի մեջ, և Հայոց հարցի միակ պաշտպանը մնում էր Անգլիան:

Ե.Գեղամյանցը շեշտված թշնամությամբ է լցված ազատագրական շարժման գործիչների նկատմամբ, որոնք թուրքահայերի ճակատագրով իբր սկսում են զբաղվել միայն այն ժամանակ, երբ օդում վառոդի հոտ է զգացվում:

Նա ճիգ է թափում ապացուցելու, որ ազատագրական շարժումը հայերի կյանքից, նրանց մտավոր, տնտեսական դրությունից չէր բխում, այլ էր «դրսից մտած մի արհեստական, բռնազբոսիկ երևույթ, որ հակառակորդ պետությունների քաղաքական հարաբերության լարման, կամ ընդհարման միջոցին հանկարծ պոռթկում, դուրս է գալիս և հետո անհետանում է, մինչև հարաբերությունների նորոգ լարվելն ու ընդհարվելը՝ հակառակորդ պետությունների մեջ»[3]: Այդ ելակետից էլ նա հայտարարում է, թե Հայկական հարցի առաջքաշումը երբեք ոչ միայն որևէ չափով չի բարելավել տառապող ժողովրդի վիճակը, այլ ընդհակառակը, դրան զուգընթաց նրա դրությունը վատթարացել է: Այդ նույն ելակետն է «հիմք» տալիս նրան ասելու, որ ընդհանուր կոտորած, ժողովրդական ջարդ, քաղաքների և գյուղերի ավարառություն և ավերում, կանանց առևանգում, արտագաղթ և այլ այսպիսի աղետներ գոյություն չունեին Արևմտյան Հայաստանում մինչև այն օրը, երբ օսմանյան կառավարությունը ոչ մի կասկած չուներ թուրքահայերի բարեհուսության վրա:

Այդ կասկածը ծագեց այն օրից, երբ ռուսական կառավարությունը սկսեց ակտիվացնել իր արևելյան քաղաքականությունը: Հայերի համար կործանարար այդ քաղաքականությանը անհիմն կերպով թև ու թիկունք դարձան նախ արևելահայերը, ապա՝ արևմտահայերը: Ուրեմն, ըստ հեղինակի, զարմանալի չէ, որ օսմանյան կառավարությունը միջոցներ պիտի ձեռնարկեր ռուսական բանակին խաչ խաչվառով դիմավորող հայերին զսպելու համար: «Հայերի մասսայական կոտորածներն ընդհանրացան և որոշ սիստեմի տակ դրվեցան ամբողջ տաճկահայությանը բնաջինջ անելու նպատակով, 1877 թվականի ռուս-տաճկական պատերազմից հետո և նրա հետևանքով»[4], - եզրակացնում է Ե.Գեղամյանցը: Առավել ճարպիկ արդարացում թուրք ջարդարարների համար դժվար է ձևակերպել: Ե.Գեղամյանցը ջանք չի խնայում դատապարտելու դարավերջի տասնամյակում հանդես եկած հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, բայց ոչ թե ճիշտ ուղի նշելու ազնիվ մղումով, այլ այն հեզ մտայնությամբ, թե «որքան ավելի հանդուգն եղան հայ հեղափոխական կազմակերպությունները, այնքան ավելի սուլթանի զայրույթը սաստկացավ իրենց դեմ և այնքան ավելի առիթ ունեցավ արդարանալ Անգլիայի առջև՝ թե բարենորոգումների գործը չի կարող առաջ տանել՝ հայ հեղափոխական շարժումների և խռովությունների պատճառով[5]: 90-ական թվականների կոտորածներով էլ, որը, ըստ Գեղամյանցի, կուսակցությունների գործունեության տրամաբանական հետևանքն էր, նա փակում է 6-րդ շրջանը:

---

[1] Լեո, Հայոց հարցի վավերագրերը /առաջաբանը/:
[2] Հ.Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր-Նախիջևան, 1915:
[3] Ե.Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ հայկական հարցի 5-րդ շրջանը, Բաքու, 1915, էջ 226:

[4] Ե.Գեղամյանց, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ հայկական հարցի 6-րդ շրջանը, Բաքու, 1915, էջ 423:
[5] Նշվ. աշխ., էջ 431-432:

* * *

Հիմնահարցի լուսաբանման առումով կարևոր են ազգային-պահպանողական ուղղության խոշոր ներկայացուցիչ՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի տեսակետները ազատագրական շարժման գնահատման վերաբերյալ, որոնք արտահայտված են նրա «Ազգապատում» եռահատոր, ընդարձակածավալ ուսումնասիրության երրորդ հատորում[1]: Ուշադրության արժանի է Կ.Պոլսի հայոց նախկին պատրիարքի գնահատականը Սահմանադրության մասին: Նա երբեք էլ այն կարծիքին չէ, թե Սահմանադրությունը պարզապես օսմանյան կառավարության շնորհն էր և գտնում է, որ նման զիջման կառավարությունն ստիպված էր գնալ՝ հայերի հանդարտությունը պահելու համար:

Զեյթունի /1862թ./ ապստամբության առնչությամբ Օրմանյանը հերքում է ժամանակին տարածված այն կարծիքը, թե իբր 25-ամյա վարդապետ Ներսես Վարժապետյանը, որը մտցվել էր քննիչ հանձնաժողովի կազմում, դրամաշորթությամբ է պարապել, եսասիրաբար խույս է տվել պարտականությունից և ուղևորվել Սիս՝ եպիսկոպոս օծվելու համար: Օրմանյանը վկայում է, որ Սսում նա սպասում էր պաշտոնական հրահանգի՝ Զեյթուն մեկնելու համար, սակայն, երբ լուր է ստանում, որ հանձնաժողովն արդեն ավարտել է աշխատանքը, շուտափույթ մեկնում է Պոլիս՝ զեյթունցիներին այնտեղ օգտակար լինելու համար: Մ.Օրմանյանը, հակադրվելով պրոֆ. Կ.Թումայանին, Ներսեսին պաշտպանում է նաև Սան Ստեֆանոյի պայմանագրի կապակցությամբ, ժխտելով ընդունված այն կարծիքը, թե Ներսեսը վճռեց Սան Ստեֆանո գնալ միայն դաշնագրի ստորագրման նախորդ օրը: Նա վկայում է, որ Ն.Վարժապետյանը դրա համար նախապատրաստական հանգամանալի աշխատանք էր տարել: 16-րդ հոդվածը նախընտրելի համարելով 61-ից, Օրմանյանը գտնում է, որ վերջին անահաջողության մեջ ևս չպիտի մեղադրել Ներսեսին, այլ նրանց, ովքեր հոդվածում անորոշություններ մտցրին:

[1] Մ.Օրմանյան, Ազգապատում /հայ ուղղափառ եկեղեցվո անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը հարակից պարագաներով պատմված/, հ. 3, Երուսաղեմ, 1927:

Օրմանյանը հայերի զենք վերցնելու հիմնական դրդիչներ համարում է օսմանյան պետությանը և օտարերկրյա տերություններին, որոնք Բեռլինի կոնգրեսից հետո շտապեցին բարեփոխումներ ձեռնարկել Թուրքիայի եվրոպական այն նահանգներում, որոնք պատերազմի ժամանակ ապստամբել էին, իսկ հայերը, որոնք բավարարվել էին միայն բարենորոգումներ աղերսելով, մնացել էին նույն վիճակում:

Իբրև Կարինի նախկին հոգևոր առաջնորդ, Մ.Օրմանյանը որոշ տեղեկություններ է հաղորդում «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության հայտնաբերման և վերացման մասին: Նա վկայում է, որ կազմակերպության անդամները հիմնականում արհեստավոր երիտասարդներ էին, որոնց գլուխն էր աղքատ երիզագործ Խաչատուր Կերեկյանը: Անտեղյակ լինելով կազմակերպության իրական մասշտաբներին, կամ անտեղյակ ձևանալով, Օրմանյանը գրում է, թե դա կարծեցյալ հեղափոխություն էր, չկար խելահաս մեկը, որ կարողանար գլխավորել նման կազմակերպություն: Կազմակերպության անկարևոր լինելը հավաստելու համար Օրմանյանը վկայակոչում է մեղմ պատժաչափերը, որոնք կայացվեցին իբր այն բանից հետո, երբ կառավարությունը ևս համոզվեց կազմակերպության աննշան լինելու և սոսկ անձնապաշտպանության նպատակ հետապնդելու մեջ:

Նա կարծեցյալ է համարում նաև Սասունի 1894-ի ապստամբությունը և գտնում, որ այն սոսկ անձնապաշտպանություն էր:

Օրմանյանը խոսում է արմենական, հնչակյան և դաշնակցական կուսակցությունների մասին և իբր ընդհանուր թերություն նշում, որ նրանք նպատակն իրականացնելու միջոցներ չէին գտել:

Մեկ այլ աշխատության մեջ[2] Մ.Օրմանյանը սուր քննադատության է ենթարկում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, արժանի չգտնելով անգամ դրանք կուսակցություններ կոչել: Հարկ է նկատել, սակայն, որ այդ քննադատությունը շատ դեպքերում միակողմանի է, երբեմն էլ չպատճառաբանված: Ոչ ճիշտ կերպով երեք կուսակցություններին էլ մոտենալով միևնույն չափանիշով և չտեսնելով ազատագրական շարժման մեջ նրանց խաղացած որևէ դրական դեր, Մ.Օրմանյա-

[2] Մ.Օրմանյան, Խոհք և խոսք: Երուսաղեմ, 1929:

նը նրանց նստեցնում է միևնույն մեղադրական աթոռին՝ միևնույն մեղադրականով, այն է՝ միահամուռ համերաշխ գործողությունների փոխարեն, որը կարող էր գոհացուցիչ վախճանի հանգեցնել կուսակցությունները գործեցին բաժանված ու անջատված, իրար դեմ դավաճանական քայլեր կատարելով, միմյանց ղեկավարների վրա անգամ մահափորձ կազմակերպեցին և ազատասերների անուն վաստակելու փոխարեն վարկաբեկվեցին և անարգվեցին իբրև «սրիկայական ջոկատներ»: Իբրև երկրորդ գլխավոր թերություն Օրմանյանը նշում է, որ կուսակցությունները չունեցան փորձառու, խոհուն ու վարչագետ ղեկավարներ: Նրանց ղեկավարները մեծ մասամբ հախուռն երիտասարդներ էին, անփորձ դպրոցականներ, բախտախնդիր պանդուխտներ, արկածախնդիր գլուխներ, որոնք ոչ կարողացան մի հիմնական ծրագիր կազմել, ոչ էլ որևէ հաստատուն ուղղություն ունենալ:

Օրմանյանը դատապարտում է կուսակցությունների՝ նյութական միջոցներ հայթայթելու բռնի, ահաբեկչական եղանակները, ինչպես նաև դժվարություններով ձեռք բերված այդ միջոցները աննշանակ ու ապարդյուն զինված միջադեպերի կազմակերպման վրա վատնելը, կամ դրանցով կուսակցական պետերի կողմից ցոփ կյանք վարելը:

Նա Աբդուլ Համիդին զայրացնելու ու չափազանցությունների գրգռելու մեղքը ևս հանիրավի բարդում է կուսակցությունների վրա:

Կուսակցությունների ղեկավարների վարչագիտական անընդունակությունը ցուցահանելու նպատակով Օրմանյանն ընդգծում է այն փաստը, որ նրանք հակադրվեցին նաև ռուսական կառավարությանը և արժանացան նրա հալածանքներին, փոխանակ համագործակցելու վերջինիս հետ:

Իր այս խտացված քննադատությունը, սակայն, Օրմանյանն ավարտում է խիստ քննադատելի ու պախարակելի այն մտայնությամբ, թե իբր 1908 թվականի հեղափոխությունից հետո երիտասարդ թուրքերի ու դաշնակցականների միջև ստեղծված «եղբայրական» հարաբերությունների խզման մեղավորները վերջիններս էին, որի հետևանքով «...երբ հայուն բարօրության արշալույսը կբացվեր, առանց ցերեկի պայծառության վայելքը

տեսնելու, երկնային վերջալույսը հաջորդեց և դուռ բացավ այն աղետալի կացության, զոր ողբացինք և կողբանք և կցավինք, որ ծախորդության պատճառ տվողներն ալ նույն աղետներու անդունդին մեջ սուզվեցան ու անհետացան»[1]:

Մ.Օրմանյանի՝ հայ ազգային-ազատագրական շարժման հանդեպ ունեցած դիրքավորման մեջ, այսպիսով, նշմարելի է երկու փուլ. եթե 80-ական թվականներին նա համակիր էր բռնադատիչներին զինված անձնապաշտպանություն հակադրելու գաղափարին և անգամ կասկածվում էր «պաշտպան Հայրենյացի» հետ առնչություն ունենալու մեջ, ապա 90-ական թվականներից նա կանգնեց հետադիմական դիրքերում՝ կտրականապես դեմ արտահայտվելով զինական ամեն մի շարժման, որոնք միայն կարող էին գրգռել «վարչական անվիճելի կարողության», «ուշիմ հետապնդության», «խորաթափանց տեսության», «անմոռաց հիշողության»[2] և այլ «բարեմասնությունների» տեր սուլթան Համիդի զայրույթը:

«Խոհ և խոսք» ինքնակենսագրականում նույնպես Մ.Օրմանյանն անդրադարձել է «Պաշտպան Հայրենյացին»:

Մեկնաբանելով կազմակերպության առաջացման հիմնապատճառները, նա գրում է, թե Կարինի հայերը գաղտնապես զինվելու վճիռ կայացրին, որովհետև հապաղում էր Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի համապատասխան կետերի գործադրումը, հարստահարող ցեղին՝ քրդերին, ներվում էր զինված մնալը, իսկ հարստահարվողներին՝ հայերին, խստիվ արգելվում էր զենք կրել: Կարինի երբեմնի հոգևոր առաջնորդը կրկին պնդում է, որ կազմակերպությունը չի ունեցել հակակառավարական և անջատողական մտայնություն, այլ հիմնվել է զինված հարստահարիչներին զենքով ընդդիմանալու դիտավորությամբ: Կազմակերպության հիմնադրման հավանական թվականը նա համարում է 1882-ի առաջին կեսը: Օրմանյանը նշում է, որ կազմակերպությունը, որին գաղտնիության պահանջներից ելնելով տրվել էր «Երկրագործական ընկերություն» անունը, մեծ ընդունելություն գտավ արհեստավոր և գործավոր դասակարգի մեջ, և «ծերբակալվածներն ալ բոլոր յետին դասա-

[1] Մ.Օրմանյան, Խոհք և խոսք, էջ 219:
[2] Նշվ. աշխ., էջ 184:

կարգեն էին, արհեստավորներ, արհեստավորի աշակերտներ, երիտասարդ հողագործներ և նմաններ»[1]:

Հակառակ այն ուսումնասիրողների, որոնք գտնում են, թե իբր Օրմանյանը հանդիսացել է «Պաշտպան Հայրենյացի» կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը, ինքնակենսագրողը նման լուրերը համարում է իր հասցեին լռելյայն ամբաստանություն[2]: Սակայն նա չի ուրանում, որ Կարինի դեպքերին գործուն մասնակցություն է ցուցաբերել վերջին էտապում՝ կազմակերպության անդամների ձերբակալություններից հետո և մեծ ջանքեր է գործադրել պատժաչափերը մեղմելու ուղղությամբ: Նա վկայում է, որ ինքը եղել է մեծ եպարքոս Քյուչուկ Սայիդ փաշայի մոտ և նրան հուշել այն միտքը, թե «... քանի մը անձերու ամբաստանվիլն ու դատապարտվիլը Հայոց ազգին չի վնասիր, այլ կը վնասէ պէտութեան վարկին, յուր հպատակներուն դժգոհ ցուցվիլը»[3]:

* * *

XIX դարի 80-90-ական թվականներին ասպարեզ ելած հայ քաղաքական կուսակցությունների՝ ազգային-ազատագրական շարժմանն ունեցած մասնակցության որոշ հարցեր շոշափված են այդ կուսակցությունների մի քանի աչքի ընկնող ներկայացուցիչների գործերում: Մենք արդեն հիշատակել ենք հնչակյան գործիչ Հ.Ճանկյուլյանի «Հիշատակներ հայկական ճգնաժամեն» աշխատությունը: Նրա կողմից հայ ազատագրական շարժման վերելքի շրջանը ոչ ճիշտ կերպով ընկալվում է իբրև ճգնաժամային էտապ:

Ժամանակի հայ մտավորականության որոշ շերտերում արմատացած այն մտայնությունը, թե դարավերջի հայկական կոտորածների բուն պատճառը դաշնակցականներն են՝ իրենց վնասակար ու անհեռատես գործելակերպով, դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի կողմից որակվեց իբրև «Ամբոխային տրամաբանություն»[4] և անհեթեթություն:

[1] Նշվ. աշխ., էջ 120:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 122:
[4] Քր.Միքայելյան, Ամբոխային տրամաբանություն, Փարիզ, 1905:

Դրան հակառակ՝ հեղինակը փորձեց բացատրել դաշնակցության հանդես գալու սոցիալ-քաղաքական հանգամանքները, մեր կարծիքով՝ ճիշտ բացահայտելով կոտորածների իրական պատճառները:

Հայ քաղաքական կուսակցությունների դարավերջի գործունեության քննադատություն է պարունակում սպեցիֆիկյան գաղափարախոս Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատությունը: Համադրելով հնչակյան կուսակցության պրակտիկ գործունեությունը և ընդունած ծրագիրը՝ Դ.Անանունը գտնում է, որ այդ ծրագրում ազգային շարժումն ու նրա սպասավորումը դառնում է ամեն ինչ, իսկ սոցիալիզմն ու կոմունիզմը՝ ոչինչ[5]:

Վերլուծելով դաշնակցականների իրականացրած մարտական գործողությունները /օսմանյան բանկի գրավում, Խանասորի արշավանք և այլն/, հեղինակը նշում է, որ դրանք կրում էին ցուցադրական բնույթ և հեռու էին կազմակերպված շարժում լինելուց[6]: Ընդգծելով կուսակցությունների՝ շարժմանը հասցրած վնասը՝ Դ.Անանունը գրում է. «...երբ մեր առաջին մարքսիստները հարձակվում էին հնչակյանների ու դաշնակցականների վրա, թե նրանք քաղաքականորեն դիմադրում են հայ բանվորին և գյուղացուն - դա մի կատարյալ ճշմարտություն էր... Այո, իրավունք ունեին առաջին մարքսիստները, երբ դառնալով հնչակյաններին ու դաշնակցականներին, նրանց երեսովն էին տալիս, թե դուք մթագնեցնում եք հայ աշխատավորի քաղաքական միտքը»[7]: Իրավացի է, սակայն, Դ.Անանունը, մերժելով դարավերջի մարքսիստական գրականության մեջ արտահայտված այն սխալ թեզը, թե հայ ազատագրական շարժումը շուկաների նվաճման մի մարմաջ էր[8]:

Հայ ազատագրական շարժումների և Հայկական հարցի քաղաքական էությունը «առաջին անգամ մարքսիստական տեսակետով քննելու» փորձ է կատարում հայ սպեցիֆիկների ներկա-

[5] Դ.Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, հ. 2, էջմիածին, 1922, էջ 213:
[6] Նշվ. աշխ., էջ 230:
[7] Նշվ. աշխ., էջ 234:
[8] Նշվ. աշխ., էջ 243:

յացուցիչ Բախշի Իշխանյանը[1]: Ճիշտ կողմնորոշվելով եվրոպական պետությունների՝ օտար լծի տակ տառապող ժողովուրդների հանդեպ ունեցած վերաբերմունքի գնահատման հրահրում, Իշխանյանը գրում է. «Զորեղ պետությունների շահագրգիռ թափով ինտերեսները իրար դեմ են ելնում Թուրքիայում այնպիսի մեծ թափով, որ բացարձակապես անկարող է նրանցից մեկն ու մեկը առանձնապես մի նշանավոր խնդիր լուծելու իրավական հիմք և փաստական ուժ ու քաջություն ունենալ: Հենց այդ է պատճառը, որ այժմ սիստեմատիկաբար կոտորածի ենթակա սլավոններն ու հայերը գրեթե ոչ մի ուշադրության չեն արժանանում պաշտոնական Եվրոպայի կողմից»[2]: Խոսելով Բեռլինի կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի մասին՝ Իշխանյանը նկատում է, որ եթե այն սկզբում հույս ու ոգևորություն էր ներշնչում հայ ժողովրդին ու նրա գաղափարախոսներին, նույն այդ հոդվածը հետագայում իրապես դարձավ դժոխային կյանքի վերաստեղծման և դառն հուսախաբության մի անկյունաքար: Առանձին-առանձին վերլուծելով յուրաքանչյուր խոշոր պետության և թուրքահայ խնդրի հարաբերակցությունը, նա գտնում է, որ Հայկական հարցի վերաբերմամբ ցարական Ռուսաստանը բացահայտորեն դավադիր է և նենգամիտ, բացարձակ հակառակորդ է և այդ հարցի անլուծելի, առկախ վիճակի ամենամեծ պատճառը, ինքնավար Հայաստանի գաղափարի պատմական թշնամին:

Խոսելով Անգլիայի մասին, Իշխանյանը նշում է, որ նրա «հայրենասիրությունը» արտահայտվել է միայն այնչափ, որչափ դա անհրաժեշտ էր կռվելու իր պատմական հակառակորդի՝ Ռուսաստանի դեմ: Իշխանյանի կողմնորոշումը միանգամայն ճիշտ է Ֆրանսիայի դիրքը գնահատելու հարցում՝ «Քանի Ֆրանսիան կշարունակե պահպանել իր այնքան սրտակցական ու բարեկամական դաշնադրությունը Ռուսիայի հետ,այնքան էլ նրա դիվանագիտական դիրքն ու տակտիկը՝ ընդհանրապես արևելյան և հատկապես Հայկական հարցի նկատմամբ սերտ միացած պիտի լինի Ռուսաստանի դիվանագիտության հետ. ավելի ճիշտ՝ պիտի ստորադասված և ենթարկված լինի ռուսական քաղաքա-

[1] Բ.Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1906:
[2] Նշվ. աշխ., էջ 19:

կանության»[3]: Իսկ Գերմանիան երբեք չի եղել և շահ էլ չուներ լինելու ձեռնարկիչը այս կամ այն ժողովրդի ազատագրության և մեծ մասամբ ձեռնպահ է մնացել հավաքական միջամտություններին մասնակցելուց:

Ավելի ցայտուն դարձնելու համար Գերմանիայի անտարբերությունը, Իշխանյանը նշում է, որ նրանից ակնկալություն չեն ունեցել նույնիսկ հնչակյաններն ու դաշնակները, որոնք առիթը բաց չէին թողնում այս կամ այն օտարերկրյա պետությանը դիմելու: Իշխանյանի կարծիքով Ավստրիան ու Իտալիան իրերի բնական բերումով գրավել են երկրորդական, չափավոր տեղ և Հայկական հարցի համար առանձնապես նշանակություն չեն ունեցել: Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա «Միացյալ նահանգներից հավանական սպասելիքներ, փրկարար հույս ու ակնկալություն ունենալը կազմում է Հ.Հ. Դաշնակցության անպտուղ երազների ու անհատակ իլյուզիաների նորագույն Ֆազիսը»[4]: Քննադատական խիստ խոսքեր ուղղելով դաշնակցականների հասցեին՝ Բ.Իշխանյանը գտնում է, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Արևմտյան Հայաստանում ուժգին թափ հաղորդեց կոտորածների սիստեմատիկ քաղաքականությանը: Սակայն նա ընդունում է, որ հայ հեղափոխական կազմակերպությունների արատավոր կողմերի քննադատությունը հիմք չպիտի դառնա հետևցնելու, թե ազատագրական շարժումը Արևմտահայաստանում անբնական կամ անիրավացի է:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ու նրա գնահատման հարցը զբաղեցրել է նաև հայ մարքսիստներին: Ճիշտ է, նախախորհրդային շրջանում նրանք հատուկ ուսումնասիրություններ չեն նվիրել հայ ազատագրական շարժման վերլուծությանն ու գնահատմանը, սակայն այդ կարևորագույն խնդրի վերաբերմամբ ունեցել են որոշակի դիրքավորում, որն արտահայտվել է ժամանակի բոլշևիկյան մամուլում հրապարակված բազմաթիվ հոդվածներում /«Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կռիվ», «Բանվորի ձայն», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և այլն/: Հայ բոլշևիկները, հայ ազատագրական շարժման արդյունավետ ապագան տեսնում էին այն համառուսական հե-

[3] Նշվ. աշխ., էջ 59:
[4] Նշվ. աշխ., էջ 74:

ղափոխական ընդհանուր շարժմանը սերտորեն լծորդելու մեջ: Հիշատակության արժանի է «Պրոլետարիատ» թերթում հրապարակված «Սոցիալ-դեմոկրատիան և իրականությունը» ընդարձակ հոդվածը, որտեղ հատուկ խոսվում է հայ ազատագրական պայքարի հեռանկարների մասին՝ շաղկապված ռուսական հեղափոխության հաղթանակի հետ և հրապարակավ համակրանք է հայտնվում արևմտահայ ազատագրական շարժման նկատմամբ: «Ուղարկելով Տաճկահայաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը, մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»,- դեռևս 1902-ին գրում էր «Պրոլետարիատի կռիվ»-ը: Ազգային հարցի վերաբերյալ ընդհանրապես և հայ ազատագրական շարժման վերաբերյալ մասնավորապես, հայ բոլշևիկների վերաբերմունքը առավել ամփոփ և ավարտուն ձևով արտահատվեց Ստեփան Շահումյանի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ, որն առաջին անգամ լույս տեսավ 1906-ին բոլշևիկյան «Կայծ» թերթում և ապա նույն թվականին հրատարակվեց առանձին գրքույկով:

* * *

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ մինչխորհրդային հայ պատմագրությունը կարևոր փաստական հիմք ծառայեց հետագա ժամանակաշրջանում հիմնահարցի առավել խորն ու գիտական լուսաբանման համար:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին XIX դարի եկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ դրսևորվեց ժխտողական վերաբերմունք, կաղապարվեց այն հակագիտական մոտեցմամբ, թե իբր այդ շարժումը ծառայել է հայ բուրժուազիայի շահերին, ջուր է լցրել ցարիզմի նվաճողական քաղաքականության ջրաղացին, ուստի այն որակվեց իբրև բուրժուանացիոնալիստական հետադիմական շարժում: Արգելվեց ոչ միայն գրել այդ հարցերի մասին, այլև արտասանել շարժման գործիչների անունները:

Այդ հակագիտական տեսակետները վճռականորեն մերժեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը՝ դեռևս 1946 թվականին պաշտպանած իր դոկտորական դիսերտացիայում, որի համար ենթարկվեց հալածանքների: Միայն 1955-ին նրան հաջողվեց հրատարակել «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» հիմնարար մենագրությունը, որով հիմք դրվեց հայ ազգային-ազատագրական շարժման ճշմարտացի ու գիտական լուսաբանմանը խորհրդահայ իրականության մեջ: Մենագրության մեջ ցույց տրվեց, որ հայ ազգային-ազատագրական շարժումն ուներ ժողովրդական, առաջադիմական բնույթ: Վաստակաշատ ակադեմիկոսն ունեցավ հետևորդներ ու աշակերտներ, որոնք հրատարակեցին մի շարք արժեքավոր գործեր:

Սակայն խորհրդահայ պատմաբանների ճանապարհին շարունակվում էին հարուցվել լուրջ խոչընդոտներ, գաղափարական մամլիչը կատարում էր իր գործը:

Հայոց պետականության վերականգնումից ու Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո էր միայն, որ հիմնահարցի լիարժեք ու անկողմնակալ լուսաբանման համար ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ ու գաղափարական-քաղաքական անկաշկանդ մթնոլորտ:

Միեր Ստեփանի Կարապետյան, էդիկ Գևորգի Գևորգյան

XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ուսումնաօժանդակ ձեռնարկ

Հրատարակչության տնօրեն Է.Ս. Մկրտչյան
Գեղ. խմբագիր Ա.Ա. Բաղդասարյան
Սրբագրիչ Ս.Մ. Մելքումյան
Համակարգչ. ծնավորող Գ.Ա. Հարությունյան

Տպագրությունը օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16:
Ծավալը 4.25 մամ.: Տպաքանակը 140:

Տպագրված է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում.
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ. (+37410) 23-25-28,
ֆաքս (+37410) 23-25-95, էլ. փոստ info@zangak.am, էլ. կայք www.zangak.am